

ԱՆԳԱՐԱ, 21 (ԱՅՓ).- Թրքական առեւտրի անպարտ հոշակած է Երեքշաբթի օր իշխող Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութեան (ԱՔՓ) ղեկավար Ռեճեփ Թայիփ Էրտողանը՝ իր եկամուտը տեղեկացուցած չլլալու անբաստանութենէ մը:

Յունիս 2002ին, Էրտողանի դէմ ուղղուած անբաստանութիւն մը կ'ըսէր, թէ 1998ին, երբ ան պաշտօնակալուած էր Պոլսոյ քաղաքապետի պաշտօնէն եւ 2001ի միջեւ, երբ ան ԱՔՓի ղեկավար դարձած է, անոր հարստութիւնը 256 միլիարդ թրքական լիրայով (շուրջ 153 հազար տոլար) աւելցած է:

Անբաստանութիւնը կ'ըսէր, թէ այդ աճը կարելի չէր բացատրել այդ ժամանակաշրջանին անոր եկամուտներով եւ պահանջած շուրջ 5 տարուան բանտարկութեան վճար մը:

Մակայն դատախաչութիւնը Երեքշաբթի օր ըսած է, թէ թրքական օրէնքը կը պահանջէ, որ միայն պետական պաշտօնեաներու հարստութիւնը ստուգուի եւ թէ Էրտողան իր աւուր ընդէր պատճառով զրամ շահելու 1998էն 2001 ժամանակա-միջոցին, երբ ան պետական պաշտօնէն չէր:

Ա. ԷԿՈՅԵԱՆԻ ԺԱՊԱՒԷՆԻՆ ԱՌԱՋԻՆ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆԸ՝ «ԱՊՐԱՏ»Ի ՄԷՁ

«ԱՐԱՐԱՏ»Ը՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐԱՉԱՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայկական Յեղասպանութեան ճանաչման ու Հայ Դատի հետապնդման աշխատանքները շարժապատկերի միջոցով հետապնդելու նշանակալից իրագործում մը կը նկատուի քանատապալի քեմադրիչ Աթոմ Էկոյեանի «Արարատ» ժապաւէնը: Առաջին անգամ ըլլալով քանի որ 2002ի փառաստանին մրցակցութենէ դուրս ցուցադրուած «Արարատ»ը ահագին մեկան հոստեցնել տուաւ իր մասին՝ ստիպելով, որ թրքական ու միջազգային մամուլը ժապաւէնին ընդմէջէն այս կամ այն կերպով անդրադառնան Հայկական Յեղասպանութեան:



Խորհրդարանի փոխ նախագահը իր խօսքին պահուն

ցուցադրութեան հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ Երեկ, Երեքշաբթի, 21 Յունուարի երեկոյեան ժամը 7:30ին, շարժապատկերի «Արարատ» արահին մէջ: Սրահը ամբողջութեամբ լեցուցած ներկայներուն շարքին էին խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆրըվլի, հայ կաթողիկէ Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարք, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովսէփեան, նախկին նախարար Շահէ Պարունեան, նախկին երեսփոխաններ՝ Սուրի-ճան Տեմիրճեան, Արարատի Տէտեան, Ժաք Չուխատարեան, ինչպէս նաեւ լիբանանահայ միութիւններու եւ կապակերպութիւններու ներկայացուցիչներ:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութենէն ետք արարեքնով եւ անգլերէնով խօսք առաւ Մարայ Չոլոյեան, որ ներկայացնելէ ետք «Արարատ» ժապաւէնին պատմականը եւ 2021-ի հարցերը, ըսաւ, որ ժապաւէնը կը կերտուանայ թուրքիոյ կողմէ:

ՏԵՆՔԹԱՇ ՀԻՒՍԿԻՊՐՈՍԻ ՄԷՁ ՀԱՆՐԱՔՈՒԷ ՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸԱՅԼԻՆ ՊԻՏԻ ԴԻՄԷ

Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ երէկ յայտնած է, թէ իր շրջանին, զոր «փոքր պետութիւն մը» կը նկատէ, օրէնքները կը պահանջեն, որ յոյն կիպրացիներուն հետ վերամիացման հաւանական համաձայնագրի մը կնքումէն առաջ հանրաքուէ մը կայացուի: «Ասիկա օրինական պարտադրութիւն է», ըսած է ան՝ աւելցնելով, որ այդ պարտանքն ՄԱԿի պատուիրակ Ալվարո օտ Սոթոլի ուշադրութեան պիտի յանձնէ, որպէսզի «անակնկալի դիմաց չգտնուի», ըստ թուրք կիպրացի թուրք լրատու գործակալութեան: Թուրք կիպրացի ղեկավարներուն կողմէ զայն ստորագրելէ ետք:

Տենքթաշ եւ կիպրոսի նախագահ Կյաֆրոս Քլեբի-տէս անցեալ շաբաթ ՄԱԿի ծրագրի շուրջ լայնածիր բանակցութիւններուն վերսկսած էին: ՄԱԿ կ'ուզէ, որ երկու կողմերը համաձայնութիւն մը գոյացնեն մինչեւ Փետրուարի վերջերը, ապա հոս վերա համար, որ միացեալ կիպրոսը Ապրիլին պիտի ստորագրէ Ե. Միութեան անդամակցութեան համաձայնագիրը:

(ԱՅՓ)

ԱՄՏՏԱՄ ԸԻԻՄԷՅՆ ԱՇԽԱՐԿԻ ԱՄԵՆԷՆ ՎՏԱՆԳԱԴՈՐ ԲՈՆԱՏԵՐՆ Է

Կ'ԸՍԷ Տ. ԱՄՏՏԵԼՏ

ՄԱԿի քննիչները փորձաքարի ենթարկեցին յաւել-եալ գործակալութիւնը ցուցաբերելու Իրաքի խոստում-մը, այն պահուն, երբ ղեկանազիտական ռազմաճակատները կը խոստանային ՄԱԿի մէջ՝ արաբական երկիրին դէմ զինուորական գործողութեան մը զօրով ծայր տուած տարակարծութիւններուն պատճառով: 53րդ օրն ըլլալով ԱՆՍՈՎԻՔի եւ Հիւլէական ու-ժանիթի գործակալութեան քննիչները շարունակեցին փնտրութիւնը հաւաքական քանդումի դէպքերու գոյութեան կամ փճացման մասին փաստերու: Անոնք ցարդ շօշափելի փաստեր չեն գտած: Քննիչներուն գտած փաստերուն եւ կատարուելիք արժեւորումին հիման վրայ է, որ Ապահովութեան խորհուրդը որոշում պիտի տայ Իրաքի մասին: Գլխաւոր քննիչները՝ Հանս Պիլքս եւ Մոհամէտ Պարատի Յունուար 27ին

Ապահովութեան խորհուրդին պիտի ներկայացնեն իրենց տեղեկագիրը եւ ցարդ կատարուած քննու-թիւններուն արժեւորումը:

Իրաքի տեղեկատուութեան նախարարութիւնը յայտնեց, որ քննիչները աւելի քան եօթը կեղծոյններ ուղղութեամբ երէկ ստուգելու համար, թէ Պաղատա կ'ենթարկուի՝ ՄԱԿի ապագինման որոշումներուն: Պիլքս եւ Պարատի, որոնք շարժապատկերին իրաք կը գտնուէին, Պաղատան մեկնումի պահուն ըսին, որ Ապահովութեան խորհուրդին պիտի յայտնեն, թէ քննութիւնները տակաւին կ'էս ճամբան կտրած են, եւ թէ բաւարար փաստ չկայ թղթածրարը փակուած նկատելու: Պիլքս աւելցուց, որ թէեւ շատ մը վարքեր քննութեան ու խուզարկութեան ենթարկուած են, ու

Շաբ.՝ էջ 10

ՇԱՐՈՆԻ ԱԿՆԱՐԿԵԼՈՎ

ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ՔՈՒՏԱՐԿՈՂԸ ՊԻՏԻ ԸՆՏՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԵԻ

Կ'ԸՍԷ ԱՐԱՖԱԺ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Նասէր Արաֆատի համաձայն, Իսրայէլի մէջ յառաջիկայ Երեքշաբթի օր կայանայիք ընտրութիւններուն խորհրդակցի քուէարկող ընտրութիւն մը պիտի կատարէ պատերազմի եւ խաղաղութեան միջեւ:

Արաֆատի խորհրդատու Մամուուհ Նաուֆալ ըսաւ, որ պաղեստինցի ղեկավարը քաջ գիտէ, թէ աջակողմեան Լիբուտի ղեկավար Արիէլ Շարոնի վերընտ-

րութիւնը պիտի ազդէ պաղեստինեան քաղաքակա-նութեան վրայ: Նաուֆալ աւելցուց, որ Շարոնի վերընտրութիւնը պիտի զգուշացնէ խաղաղութեան համաձայնագրի մը նուաճումը:

Շարոնի պայմանները պաղեստինցիներուն հետ համաձայնագիր մը ստորագրելու համար բաւական խիստ են: Շարոն կը պահանջէ արժատական բարե-

Շաբ.՝ էջ 10

ԻՐԱՔԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸ ԿԱՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՄԱՐ

ՍՈՒՐԻԱ ՈՉ ՄԷՎ ԺԻԳ ՊԻՏԻ ԽՆԱՅԷ

ԴԱՄԱՍԿՈՍ, 21 (ԱՅՓ).- Սուրիոյ նախագահ Պաշ-չար Ասատ յայտնեց, որ Դամասկոս եւ շրջանային այլ երկիրներ կ'աշխատին հեռացնելու համար պատերազմ մը մը սպառնալիքը Միջին Արեւելքէն, հաղորդեց «ՄԱՆԱ» լրատու գործակալութիւնը:

Ասատ, որ կը խօսէր ամերիկացի մասնաւոր պատ-ւիրակ Ուիլիամ Պերնզի հետ ունեցած տեսակցութեան մը աւարտին, ըսաւ, թէ Սուրիա իր կարելին պիտի ընէ կանխարգիւելու համար Իրաքի դէմ պատերազմ մը: Ան աւելցուց, որ այս իմաստով Դամասկոս կը գործակցի շրջանային այլ ուժերու հետ:

Պերնզ, որ շրջանային երկիրներ շրջապտոյտի մը ձեւաւարկած է, Դամասկոս ժամանած էր Երկուշաբ-թի երեկոյեան: «ՄԱՆԱ» հաղորդեց, որ Պերնզ եւ Ասատ քննարկեցին շրջանային չափազանց վտանգա-ւոր կացութիւնը: Ասատ Պերնզի ըսած է, թէ արաբ-ներն ու իսլամները յուսախաբ են եւ բարկացած, որովհետեւ կը տեսնեն, թէ Ուաշինկթըն որոշած է յարձակել Իրաքի վրայ:

Պերնզ պիտի այցելէ նաեւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Պահարէն եւ Յորդանան:

ՔՈՒՏԻՅԻ ՄԷՁ ԿԸ ՄՊԱՆՆՈՒԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԸ

Քուէյթի մէջ ամե-րիկացի մը սպան-նուած է երէկ եւ ուրիշ մը ծանրօրէն վիրա-ւորուած՝ ամերիկեան քանակին զիխար կեղծոյնին մօտ մայ-րուղիի մը վրայ տեղի ունեցած յարձակումի մը ընթացքին: Հոկ-տեմբերէն ի վեր ստի-կա նման ճող դէպքն էր:

Յարձակումը, որ Քուէյթի մէջ ամերիկե-ան ղեսպանատան կողմէ «ահաբեկչա-կան» որակուած է, առաջինն էր, որ քա-ղաքայիններ թիրախ կ'առնէր, թէեւ արհերը Քուէյթի մէջ ամերիկե-ան քանակին համար կ'աշխատէին: Դեսպան Ռիչըրտ ձոնսկի հաղորդագրու-թեան մը մէջ դատա-պարտած է «ահաբեկ-



Ամերիկացի եւ քուէյթի բնակիչներ՝ ոճիրից վայրը

չական այս դէպքը»՝ Մէկ կամ երկու պի-նալներ ճամբու ելեր-վտահ ենք, թէ Քուէյ-թի իշխանութիւնները իրենց հետաքննու-թիւնները պիտի շա-րունակեն անհրա-մէշտ ձեւով: Շաբ.՝ էջ 2

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի նախագահ Ռոպէր Քոչարեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիային մէջ երէկ հանդիպում ունեցաւ նախագահական յա-նաքալայ ընտրութիւններուն իրեն աջակցող քա-ղաքական ուժերուն, հասարակական կայմակեր-պութիւններուն եւ մտաւորականներուն հետ: Ռոպէր Քոչարեանի նախընտրական քարտու-յալին նշանաբանն է «աշխատիլ միասին»:

Հանդիպումին Քոչարեան նշեց, որ 1998ի նա-խընտրական իր ծրագրերուն մէջ մասը կարե-լի եղած է իրագործել, որոնցմէ մէկ մասը՝ որոշ ուշացումով: Ան անդադարաւ անցնող 5 տարի-ներուն իր նախագահութեան շրջանին կատար-նած աշխատանքներուն:

Քոչարեան ներկայացուց Աղետի գոտիի շինա-րարական աշխատանքներուն արդիւնքները, տնտեսական աճին համեմատութիւնները, օրէնսդրական դաշտին մէջ բարեփոխման գոր-ծընթացները, գործի նոր առիթներու տեսլական ճիգերուն արդիւնքները: Ան նաեւ անդադար-աւ Լեռնային Ղարաբաղի տագնապին բանակ-ցութիւններուն մէջ Հայաստանի իշխանութիւն-ներուն որդեգրած սկզբունքներուն:

Քոչարեան նաեւ ներկայացուց իր նախընտրա-կան ծրագիրը, որ շարունակութիւնն է նախորդ ծրագրին, եւ կ'ընդգրկէ վերոնշյալ բոլոր մար-կերը: Ան դիմել տուաւ, որ բնակչութեան հետ հանդիպումներու ընթացքին ներկայացուած է-կան եւ կարելու հարցերը պիտի ներառուին ծրագրին մէջ: Ան իրեն աջակցող ուժերուն կոչ ուղղեց՝ միասնաբար աշխատիլ հասնելու համար յաջողութեան:

Ռոպէր Քոչարեան այսօր պիտի սկսի այցե-լել Հայաստանի պանապան շրջաններ:

Յ. Յ. Դ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԸ ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԿԻՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԲԻՐՈՅԻ ՆԻՍՏ

Յունուար 17-18ին իտալիոյ մէջ գումարուեցաւ Ընկերվար Միջազգայնականի Կիներու կազմակեր-պութեան Բիւրոյին նիստը, որուն կը մասնակցէին 42 երկիրներէ 72 կուսակցութիւններու եւ կազմա-կերպութիւններու 130 ներկայացուցիչներ: Նիստին Հ. Յ. Դ-ի կողմէ մասնակցեցաւ Մարիա Թիթիգեան, Հայաստանէն:

Ժողովին թեման էր «Կիները եւ բնակչութեան տե-ղաշարժը համաշխարհայնացուած աշխարհի մը մէջ»՝ համարելով, անվտանգութիւն եւ հնարաւորութիւնները: Կազմուած ինտերնացիոնալ մասնակցները գե-կուցեցին նաեւ իրենց երկիրներուն կացութեան մա-սին: Հայաստանի մասին ելոյթ ունեցաւ Մ. Թերգեան: Ժողովին աւարտին որդեգրուեցան յայտարարու-թիւն եւ բանաձեւեր: Յայտարարութիւնը կոչ կ'ուղ-ղէ ՄԱԿի անդամ երկիրներու, ինչպէս նաեւ Ընկեր-վար Միջազգայնականի կանոնը կազմակերպութեան անդամ կազմակերպութիւններու երկիրներու կառա-վարութիւններուն թիկունք կանգնել 2005ին կիներու մասին ՄԱԿի Համաշխարհային Համագումար եւ ոչ կառավարական կազմակերպութիւններու ֆորում կազմակերպելու առաջարկը:

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՑԻՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Պէյրուսի եւ Թրիփոլի մէջ փաստաբանները երէկ շարունակեցին իրենց գործադուլը՝ դատավարութիւններուն ներկայ չգտնուելով: Հետեւաբար արդարութեան պայտաններուն մէջ լուծուեցան եւ քննարկուեցան վարչական հարցեր եւ այն պարագաները, որոնք փաստաբաններու կարիք չունին:

Պէյրուսի փաստաբաններու սենտիքայի նախագահ Ռեմոն Շըտիտ յայտնեց, որ 16 Յունւարին կայացած է ժողով մը, որուն ներկայ գտնուած են արդարութեան նախարար Սամիր Ժարը, նախարարութեան ընդհանուր տնօրէնը, ընդհանուր դատախաչ Ատնան Ատտուն, Պէյրուսի եւ Թրիփոլի փաստաբաններու սենտիքաներուն նախագահները: Նշեալ ժողովին որոշում տրուած է վերջ տալ փաստաբաններուն նկատմամբ որդեգրուած ապահովական միջոցառումներուն, սակայն պայմանաժամ խնդրուած է մինչեւ 19 Յունուար:

Շըտիտ յայտնեց, որ փաստաբանները շարունակած են իրենց աշխատանքները, սակայն պայմանաժամը անցած է եւ որոշումները ոչ միայն չեն գործադրուած այլ ապահովական միջոցառումները կրկնապատկուած են եւ սաստկացած: Օրինակ փաստաբաններէն ոչ միայն պահանջուած է անձնաթուղթ այլեւ անոնք խուպարկուած են: Փաստաբանները ստիպուած եղած են անձրեւուն տակ ժամեր սպասելու արդարութեան պայտաներ մուտք գործելու համար:

Շըտիտ հերքեց, որ սենտիքաները քաղաքական հարցեր կը փորձեն իրաւիւր, այլ շեշտեց, որ անոնք կ'ուզեն օրէնքին գործադրութիւնը եւ չեն ուզեր դիմել նման գործադուլներու եւ անախորժ միջոցառումներու:

Շըտիտ շեշտեց, որ սենտիքաներուն յայտարարած է գործադրած այս գործադուլին նպատակն է արգելք հանդիսանալ փաստաբաններու եւ ներքին ապահովութեան ուժերուն միջեւ ծագելիք հաւանական բախումներու:

ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐՈՒ ԴԱՍԱԴՈՒԼ

Սեփական վարժարաններու ուսուցիչներու սենտիքայի յայտարարած եռօրեայ դասադուլին առաջին օրը երէկ արձանագրեց խախտումներ, որովհետեւ սեփական կարգ մը վարժարաններ շարունակեցին աշխատանքները:

Հիւսիսի ուսուցիչներու սենտիքան հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ սեփական վարժարաններէն պահանջեց գործադրել դասադուլը:

Սենտիքայի նախագահ Ժորժ Սաստէ երէկ յայտարարեց, որ յայտարարուած եռօրեայ դասադուլին ետք եթէ կառավարութիւնը շարունակէ անտեսել ուսուցիչներու պահանջները, սենտիքաները պիտի դիմեն մագլցողական քայլերու:

ՔՈՒԷՅԹԻ ՄԷՉ ԿԸ ՄՊԱՆՆՈՒԻ...

Շարունակուած Ա. Էջեմ

Քուէթ Սիթիէն 3 քմ. դէպի հիւսիս ամերիկեան բանակին «Տոհա» կեդրոնին մօտ:

Քուէթցի ապահովութեան բարձրաստիճան աղբիւր մը յայտնած է, որ ապահովութեան սպասարկութիւնները կը հետապնդեն մէկ կամ երկու հոգի, սակայն, բաւարար փաստեր չկան:

Հոկտեմբերէն ի վեր ափիկա ամերիկացիներու դէմ երկրորդ մահացու յարձակումը եղած է: Քուէթցի 2 Կինսայներ ամերիկեան ծովուծին մէկ անդամը սպաննած էին քուէթեան կղզիի մը վրայ ռազմափորձերու ընթացքին:

(ԱՅՓ)

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Արփի Առաքելեան եւ գաւակները՝ Պաղտիկ, Արա, Շանթ եւ Սեւակ
- Վարդան քննչ. եւ երէցկին Առաքելեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Նուար Առաքելեան եւ ընտանիք
- Տիկին Լիոնէ Լազարեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Վահէ Առաքելեան եւ գաւակունք
- Տէր եւ տիկին Արշակ Ճէմճեմեան
- Տէր եւ տիկին Յովսէփ Նանէճեան եւ ընտանիք
- Տիկին Սիլվա Ճէմճեմեան եւ գաւակունք
- Տիկին Մարկո Քրիփիլեան եւ ընտանիք
- եւ համայն ազգականներ կը գոժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային, քենեկային եւ հարազատին՝

ԺԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

(Ծնեալ Ալեքսանտրէթ, 1923ից)

մահը, որ պատահեցաւ Երեքարթի, 21 Յունուար 2003, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքարթի, 22 Յունուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պորժ Համուտի Ազգային գերեզմանատունը:

• Ներկայս ընդունիլ իբրեւ մահապո:
• Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիանի մայրուղի, «Հաւա Չիքրն» շէնք, 4րդ յարկ, Հինգշաբթի 23, Ուրբաթ 24 եւ Շաբաթ 25 Յունուարին:

ՉՈՐ. ԼԱՇՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՔԻ ՆԱԽԱԳԱՇԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի յատուկ պատուիրակ Սիլի Հիւսէյն Մաժիտը, որ Կոր. Լահուտի փոխանցեց նախագահ Սատտամ Հիւսէյնէն բանաւոր պատգամ մը:

Մաժիտ նախագահ Լահուտի ներկայացուց իրաքի տագնապին շուրջ Իրաքի եւ արաբական ու միջազգային դիրքորոշումը՝ որոնաւորելով նախագահ Լահուտի կեցուածքը, որ կոչ կ'ուղղէ իրաւարելու պիտուորական ընտրանքէն եւ դիմելու քաղաքական լուծումներու, ինչպէս նաեւ ջնջելու Իրաքի պաշարները:

Իր կարգին, նախագահ Լահուտ ըստ, որ Լիբանան կը շարունակէ իր հաղորդակցութիւնները Իրաքի դէմ պատերազմ մը կանխարգիլելու համար:

Նախագահ Լահուտ շեշտեց, որ կը մերժէ որեւէ որոշում, որ

կ'անտես ՄԱԿը: Նախագահ Լահուտ վերահաստատեց, որ Լիբանան կ'առջնաց կը մնայ Պէյրուսի մէջ կայացած Արաբական Լիգայի վեհաժողովին ընթացքին տրուած որոշումներուն, որոնց հիմամբ, արաբական երկրի մը վրայ յարձակումը կը նկատուի ամբողջ արաբական աշխարհին վրայ յարձակում:

Միւս կողմէ, Կոր. Լահուտ երէկ Պիեյրոնուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Վասիլի Պոկաչովէն ստացաւ Պիեյրոնուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոյին նամակը: Հանդիպումին ներկայ գտնուեցան Պոկաչովի ընկերակցող պատուիրակութիւնը, արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Մոհամէտ Խաւ եւ Լիբանանի մէջ Պիեյրոնուսիոյ դեսպան Էլի Սարգիս: Նախագահ Լուքաշենքոյ իր նամակին մէջ անհրաժեշտու-

թիւն նկատած էր Լիբանան – Պիեյրոնուսիա յարաբերութիւններուն ամրապնդումը, յատկապէս բարգաւաճման մարզէն ներս՝ նշելով կրթական, խորհրդարանական, տնտեսական եւ առեւտրական մարզերէն ներս փոխգործակցութեան արձանագրած յաջողութիւնը: Ան յոյս յայտնած էր նաեւ, որ գործակցութիւն գոյանայ գիտական, արհեստագիտական եւ պիտուորական մարզերէն ներս:

Նախագահ Լուքաշենքոյ ընդգծած էր, որ Պիեյրոնուսիա կը պատրաստուի հարցին նկատմամբ Լիբանանի որդեգրած կեցածքին՝ որոնաւորելով Լիբանանի արձանագրած բարգաւաճումը: Նախագահ Լահուտի յղած էր նաեւ իրաւեր մը այցելելու Պիեյրոնուսիա:

Միւս կողմէ, Պոկաչով հանդիպում մը ունեցաւ Պէյրուսի եւ Լեռնայի Քանաանի առեւտրի, երկրագործութեան եւ ծարտարարութեան գրասենեակներու համադաշնակցութեան նախագահ Ատնան Բասարիի հետ եւ ժողով մը գումարեց բոլոր գրասենեակներու նախագահներուն ներկայութեան՝ շեշտելով Պէյրուս – Միւս տնտեսական եւ առեւտրական գործակցութեան բարելաման անհրաժեշտութիւնը:

Պոկաչով այլ հանդիպում մը ունեցաւ նաեւ առեւտրի եւ տնտեսութեան նախարար Պասէլ Յիէյհանի հետ: Քննարկուեցան Պէյրուս – Միւս յարաբերութիւններու ամրապնդման հեռանկարները:

ՊԵՏԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅՆԵՐՈՒՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ՊԻՏԻ ԼՈՒԾՈՒԻ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն երէկ ելեկտրականութեան ընկերութեան ընդհանուր տնօրէն Քամալ Հայէթին պահանջեց անմիջապէս կառավարական հիւանդանոցներէն եւ ջուրի մղման կեդրոններէն անջատուած ելեկտրականութեան հոսանքը հայթայթել՝ նկատել տալով, որ նշեալ հաստատութիւնները կը ծառայեն քաղաքացիներուն շահերուն:

Ընկերութիւնը կառավարական հիւանդանոցներէն եւ ջուրի մղման կեդրոններէն անջատած էր ելեկտրական հոսանքը՝ կուտակուած պարտքերու պատճառով:

Միւս կողմէ, Պայտուն ընդունեց Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան պատուիրակ Փաթրիք Ռեմոն, որուն կ'ընկերանար պատուիրակութիւն մը:

ԿՈՒՉՈՒԻՆ

• Ամերիկեան էր քոն-տիչընը ընկերութիւնը մը (Արեւմտեան Պէյրուս) կարիքը ունի քարտուղարուհի մը՝ 3 տարուան փորձառութեամբ, անգլերէն/արաբերէն լեզուով համակարգիչ գիտնալը պայման: Ծեռ. 03-816189 կամ 01-369052 երեկոյեան:

• Սաեւ կուզուի փորձառու թեքնիկներ Եր-քոնտի-չըն գետեղողներ եւ նորոգողներ: BT ունենալը նախընտրելի է: Ծեռ. 01-378801-5 կամ 03-800601 FAX: 01-378800:

ԿՈՒՉՈՒԻ

• Computer Science BSc վկայեալ մը, հեռաձայնել 03-333890 թիւին առտուան ժամը 8:00 4:00ի միջեւ, առաւելագոյնը մինչեւ 24 Յունուար 2003:

ՆԱՅԻՐԻ ԱՒԵՏԻՔԵԱՆ ԸՆԴ ՍՈՒՐԵՆ ԳՈՒՅՈՒՄՆԵԱՆ Նշանուած

Լոս Անճելըս
11 Յունուար, 2003

www.lemagan.com

NEW: ARMENIAN CAUSE (HAY TAD)

L.Y.A. History - Martyrs - Chapters - RAZMIG - Research - Monthly News - A.R.F. History - Armenian History - Armenian Genocide - Chavakhk - Artsakh - Lisbon 5 - Armenians in Lebanon - links - Icons & photos.

ՃՆՈՐԸԱԿԱԼԱԳԻՐ

Ազգային վարժարաններու տարուան առիթով, Ազգային առաջնորդարանի կազմակերպած վիճակահանութեան բախտաւոր տոմսին (A 145) տերը՝ ՎԱՐՈՒՍ ՍԻՍԵՆԵԱՆ, ձեռնարկին ազգագուտ բնոյթն ու հետապնդած նպատակը նկատուած իր շահած պարգեւը կը նուիրէ Ազգային վարժարաններուն: Ծնորհակալութիւն՝ ազնիւ նուիրատուին:

ՈՒՍՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱԼԵԶԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԶԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ՝ ՊԵՐՐԻԻ ԵՒ ԶԱՐԻՐԻ ԶԵՏ

Մալեպոյ վարչապետ Մահաթիր Մոհամէտ երէկ տեսակցութիւններ ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ:

Մոհամէտ Պըրրիի հետ քննարկեց Լիբանան – Մալեպոյ երկկողմանի յարաբերութիւնները: Ներկայ էր Ելեւմուտքի նախարար Ֆուատ Սիհորա:

Հանդիպումէն ետք Մոհամէտ յայտնեց, որ Պըրրիի հետ քննարկած է երկու երկիրներուն միջեւ տնտեսական մարզէն ներս գործակցութեան բարելաման առնչուած հարցեր, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազգային խնդիրներ, յատկապէս՝ Իրաքի եւ Պաղեստինի տագնապները:

Մոհամէտ նշեց, որ Մալեպոյ հետաքրքրուած է Լիբանանի մէջ ընթացող ապապետականացման աշխատանքներով եւ աւելցուց, թէ Լիբանան նշանակալից բարգաւաճում արձանագրած է բաղդադեան առնչուած հարցեր: Մոհամէտ ընդգծեց, որ կը հաւատայ խաղաղութեան եւ բանակցութեամբ ու համաձայնութեամբ հարցերու լուծման եւ ոչ կոիւի կամ այլ վայրագ միջոցներու, որոնք պարտադրուին են:

Պըրրի Մոհամէտը կոչեց Լիբանանի համար «սահալի Ժաք Շիրաք»ը եւ ընդգծեց, որ Մալեպոյ ներկայացուցած օժանդակութիւնը Լիբանանի միայն տնտեսական չէ, այլ բարոյական:

«Փարիզ-2» ժողովին առնչութեամբ հարցումի մը պատասխանելով՝ Պըրրի շեշտեց, որ «Փարիզ-2»ը, «Փարիզ-3»ը եւ ամբողջ աշխարհը չեն կրնար ներքին միասնականութեան աւելի օժանդակութիւններ շնորհել մեզի: «Միացեալ Պէյրուսը մեր միասնականութեան եւ ուժին առանցքն է», աւելցուց ան:

Մոհամէտ պայ ուղղուեցաւ Քորայթէմ, որ վարչապետ Հարիրի ի պատիւ իրեն սարքեց ճաշկերոյթ մը, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Պըրրի, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրպիլի, ինչպէս նաեւ մեծ թիւով նախարարներ: Երեսփոխաններ եւ դիւանագիտական, քաղաքական, տնտեսական մարզերու ներկայացուցիչներ եւ լրագրողներ:

Ճաշկերոյթէն ետք Մոհամէտ այցելեց Պէյրուսի կեդրոնական շուկաները եւ ծանօթացաւ Սուրիայի օրագիրներուն:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՌՄԲԱԿՈՇՈՒՄ

Շուրջ հինգ ամսուան խաղաղութենէ մը ետք, Հրկայալա երէկ հարաւային Լիբանանի բռնագրաւուած Մազարէի Շրպաա շրջանին մէջ խորայեւան դիրքերու վրայ արձակեց 20 հրթիռներ:

Միւս կողմէ, իսրայիլեան օդանաւեր ուժակոծեցին Բֆար Համաժի եւ Բֆար Շուպայի միջեւ գտնուող շրջանը 155 մմ. 60 հրթիռներով: Վիրաւորուեցան երկու անձեր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական գրասենեակը ամեն օր առաւօտեան ժամը 9:00ն կ'ստոր էտք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզարա եւ պետական հիւանդանոցային բուժում):
 - 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):
 - 3) Ծանր եւ երկարատեւ բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
 - 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
 - 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (խրեթ) դիմումներ:
 - 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
 - 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
 - 8) Ընդհանուր Ապահովութեան Սպասարկութեան (Ամն Էլ Աւաժ) հետ կապուած հարցեր:
- Դիմողները պէտք է ներկայանան «Ճաղոյեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական գրասենեակ եւ կամ մայքան ներկայանալը հեռաձայնել 01 - 259881 եւ 01 - 242582 թիւերուն: Այսուհետեւ ամեն Հինգշաբթի առաւօտեան ժամը 9:00ն 11:00 երեսփոխանական գրասենեակ ներկայ պիտի ըլլայ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, որ պիտի ընդունի քաղաքացիներուն դիմումը:

ՀԱՅԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

BARON TRAVEL & TOURISM AGENCY

(SALES AGENT FOR ARMENIAN AIRLINES)

ՓԵՏՐՈՒԱՐ ԱՍՍՈՒԱՆ ԶԵՂԱՊՏՈՅՏԵՐ

- 9-13 Փետրուար SHARM EL SHEIKH 225 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 5 աստղանոց պանդոկ)
- 13-17 Փետրուար SHOPPING IN PRAGUE 490 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 4 աստղանոց պանդոկ)
- DUBAI (2 գիշեր + 3 ցերեկ) 290 \$ ԵՆ սկսեալ

ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ BARON TRAVEL, Պորժ Համուտ, Մարաթ քաղ. հեռ. 01-263624, 01-241344 եւ 03-275657 թիւերուն:

Ը.Յ.Դ. Լ.Ե.Ս. «ՀԱՅԱՍՏԱՆ» Մասնաձիւղ

ԱՐՑԱՍԵԱՆ ՊԱՅՔԱՐԻ 15 ԱՍԵՍԿԻ ՆՈՒՐՈՒՄԸ ԶԵՐՆԱՐԿ

Կը բանախօսէ՝ ընկ. Մելիք Գարազաւորեան

* Գեղարտեսարական Յայրազիր

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Յունուար 2003ի երեկոյեան ժամը 8:00ին, Աղբալեան ակումբի Սեթ Թովմասեան սրահէն ներս:

Հրատը

ՉԵՆԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս երէկ ընդունեց Լիբանանի մէջ ՉԵՆԻՈՅ նորանշանակ դեսպան Մարէք Սթրոլիլը: Դեսպանը իր անդրանիկ այցելութեան առիթով լայն տեղեկութիւններ քաղեց Լիբանանի հայ համայնքին, ու ընդհանրապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան սփիւռքեան լայնածիր առաքելութեան մասին: Փոխադարձ ծանօթացման հանդիպումը ընդգրկեց նաեւ տեղական, շրջանային ու միջազգային բնոյթի խօսակցութիւն՝ Լիբանանի, Իրաքի եւ առհասարակ Միջին Արեւելքի նիւթերով: Դեսպան Սթրոլիլ վեհափառ հայրապետը տեղեակ պահեց ՉԵՆԻՈՅ այժմուկացութեան մասին՝ անդրադառնալով նաեւ տեղւոյն հայ համայնքի կեանքին:

Հանդիպման ընթացքին վեհափառ հայրապետը կարեւորութեամբ շեշտեց, համաշխարհայնացումի այս դարուն Եւրոպայի մէջ մշակութային արժէքները պահպանելու անհրաժեշտութիւնը: «Եւրոպայն աւելի մշակութային իրականութիւն մըն է իր իրագործումներով, քան՝ քաղաքական», ըսաւ վեհափառը:

ՆԵՐՍԷՍ-ՊԵՏՐՈՍ ԺԹ. ՊԱՏՐԻԱՐԺԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԱ ԱՐԱԿԱՍՏԵԱՆԸ



Հանդիպումին ընթացքին

Հայ կաթողիկէ Մետրոպէան վարժարանին մէջ Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարքը ընդունեց Ռուսահայոց Միութեան նախագահ Արա Արահամեանը, որ Լիբանան կը գտնուի Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոսին հրատեղով՝ անցեալ Հոկտեմբերին Մոսկուայի մէջ կայացած համահայկական խորհրդածողովէն թիւ 2 համահայկական քաղաքական եւ տնտեսական կառոյցներ ստեղծելու ծրագրին իրագործման նախապատրաստական աշխատանքներու ու խորհրդակցութիւններու ծիրէն ներս:

Հանդիպումին ներկայ եղան Լիբանանի թեմի պատրիարքական փոխանորդ Վարդան եպ. Աշգարեան, պատրիարքութեան օգնական եպիսկոպոս Յովհաննէս Թէրլուպեան, ինչպէս նաեւ այլ անձնատուութիւններ:

Ա. Արահամեան պարզեց իր այցելութեան նպատակը եւ Սփիւռքի հայկական բոլոր կազմակերպութիւններն ու կառոյցները իրաւիքեց իրենց մասնակցութիւնը բերելու՝ համահայկական միացեալ քաղաքական ու տնտեսական ուժ մը ստեղծելու ձգտող Ռուսահայոց Միութեան ծրագրին:

Ներսէս-Պետրոս ԺԹ. պատրիարք, իր կարգին վստահեցուց, որ միութեան նպատակներուն իրագործումին ձգտող ամէն նախաձեռնութիւն պիտի վայելէ Հայ կաթողիկէ պատրիարքութեան պորակցութիւնը:

ԿՈՒՉՈՒԻ

● Հաստատութիւն մը կարիքը ունի երիտասարդ փորձառու քարտուղարուհիի մը: Հաշուապահութիւն եւ համակարգիչ գիտնալը պայման:
 Հետաքրքրուողները կրնան դիմել՝ ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն 4:00: Հեռ. 01-258018 եւ 01-257235 թիւերով:

ԱՒՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԻ ԵՐԵՎՈՅ

Կազմակերպութեամբ՝
ԱՂԲԱԼԵԱՆ ԱՎՈՒՄԲԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲԻՆ

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 23 Յունուար 2003, երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ, «Աղբալեան - Հ.Ս.Ը.Ս.» մարզամշակութային համալիրին մէջ:
 ● Տեղերը ապահովելու համար դիմել «Աղբալեան - Հ.Ս.Ը.Ս.» մարզամշակութային համալիրի տնօրէնութեան, հեռ. 04-722902/3:

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԸ

ՌՈՒՍԱՐԱՑՈՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱԿ Ա. ԱՐԱԿԱՍՏԵԱՆԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան վեհարանին մէջ երէկ երեկոյեան Ռուսահայոց Միութեան նախագահ Արա Արահամեան տուաւ մամլոյ ասուլիս մը, ներկայութեամբ լիբանանահայ մամուլի ներկայացուցիչներուն:

Մամլոյ ասուլիսին բացումը կատարեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան տեղեկատուութեան եւ յարաբերութեանց բաժանմունքի վարիչ Գրիգոր վրդ. Չիֆթեան, որ ներկայացուց Արա Արահամեանը ու խօսեցաւ անոր հասարակական գործունէութեան մասին:

Արա Արահամեան տեղեկացուց, որ անցեալ տարի տեղի ունեցած Ռուսահայոց Միութեան Մոսկուայի համագումարը կու գար առաջադրելու Հայերու Համաշխարհային Միութիւն մը ստեղծելու գաղափարը: Այս նպատակին իրագործման համար համագումարը յառաջացուց կազմակերպիչ կոմիտէի մը, որուն իբրեւ ներկայացուցիչ ինք ներկայիս կը շրջի գաղութ - գաղութ. կարելի եղածին չափ լայն աշակցութիւն գտնելու համար սփիւռքահայ գաղութները ներկայացնող ուժերէն:

Հայերու Համաշխարհային Միութեան կազմակերպիչ կոմիտէին ունենալիք քանի մը հանդիպումներէն ետք, այս տարուան 5 Հոկտեմբերին պիտի գումարուի համահայկական բնոյթ ունեցող այս միութեան առաջին համագումարը:

Արա Արահամեան ստեղծուելիք այս միութեան ինդիքը նկատեց հայութեան կենդանի ուժերը համախմբել Սփիւռքը հայրենիքի հետ շաղկապող հիմնական նպատակներու շուրջ: Այս առնչութեամբ ան նկատեց, որ այս հիմնական նպատակները կարելի է ամփոփել 3 կէտերու մէջ.

Ա. - Հայաստանի պետականութեան պահպանում:

Բ. - Հայկական Յեղասպանութեան ճանաչում:

Գ. - Հայութեան տնտեսական ներուժը կազմակերպելու եւ հունաւորելու հարց:

Այս նպատակին յաջողութեան համար Արա Արահամեան կը ղուղղեց բոլորին՝ իրենց աշակցութիւնը չլայնուի համար: Ան յայտնեց նաեւ, որ արդէն իսկ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հայ Կաթողիկէ ու Հայ Աւետարանական համայնքները եւ քաղաքական կուսակցութիւնները իրենց դրական կեցուածքը արտայայտած են այս կապակցութեամբ: Նորաստեղծ Հայերու Համաշխարհային Միութիւնը իր դռները բաց պիտի պահէ բոլորին դիմաց: Հայաստանի բնակչութիւնը ներկայացուցած պիտի ըլլայ անոր մէջ:

Արա Արահամեան նաեւ խօսեցաւ Ռուսահայոց Միութեան ծրագրներուն մասին: Ան ըսաւ, որ միութիւնը կը ներկայացնէ Ռուսիոյ մէջ ապրող 2էն 2,5 միլիոն հայերը եւ Ռուսիոյ քաղաքական դեկավարութեան կողմէ կ'ընդունուի գաղութի ներկայացուցիչ: Ան ներկայացուց նաեւ միութեան հրատարակութիւններն ու Հայերու Համաշխարհային Միութեան ստեղծման նախօրեակին համահայկական պատկերասփիւռի կայանի մը հիմնադրման ծրագիրը: Արա Արահամեան անդրադարձաւ նաեւ վերջերս Հարաւային Ռուսիոյ Կրասնոտար երկրամասին մէջ տեղի ունեցած հակահայ արարքներուն՝ անելցնելով, որ շատ յաճախ այդ արարքներուն ետին կանգնած էին արտաքին ուժեր:

Արա Արահամեան մամլոյ ասուլիսին ընթացքին նշեց, որ Հայերու Համաշխարհային Միութեան կազմութիւնը պիտի չհակասէ երբեք Հայրենիք - Սփիւռք համագումարներու գաղափարին, այլ պիտի լրացնէ վայն:

«ԱՆԳՐԱՆԻԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄ - 1

«Նուագախումբը՝ դարերու ընդմէջէն»

Ֆրանսերենով կը ներկայացնէ՝
ԷԹԻՆ ԶԻՓԵԼԵԱՆ

Ուրբաթ, 24 Յունուար 2003, երեկոյեան ժամը 8:00ին,
 Հ. Բ. Ը. Մ. «Տեմիրճեան» կեդրոն, 5րդ յարկ:

البيروت
 الجولاء
 النصارى
 المستقبل
 الزيار
 السفير
 الاخبار

Տեղական մամուլը իր երկնուան թիւով լուսարձակի տակ առած է պետական վարժարաններու դասադուլը, բջիջայինի թղթածրարին առընչուող վերջին իրադարձութիւնները, Իրաքի մէջ կատարուող վէնքի քննութիւններուն վերաբերող իրադարձութիւնները եւ իրաւիքեան պիտիւններուն ներխուժումը Ռամալլայի մէջ:

«Նահար» օրաթերթը գրած է, թէ բջիջայինի երկու ընկերութիւններուն համաձայնագիրին երկարաձգման շուրջ բանակցութիւններու ծիրին մէջ սուր պայքար ծայր տուած է Հարիրի պլոքին եւ նախարար Քըրտահիի միջեւ:

Ըստ «Մուսթաքպալ»-ի, Հարիրի 8ամիւնի վեր պատասխան կը սպասէ նախարար Քըրտահիին, 200 միլիարդ լ. ոսկի առկա մնացած գումարին մասին բացատրութիւն պահանջելով:

«Տիար» նշած է, թէ բջիջայինի սեփականաշնորհման շուրջ բանավեճերը կը վերադառնան: Երկու նախագահներուն հանդիպումը չարդիւնաւորուեցաւ, իսկ Հարիրի պլոքը բռնուկերով յարձակում կը գործէ Քըրտահիի վրայ: Ըստ թերթին, վերջինը հակապետը ըսած է, թէ ինք պատասխանատու նախարար է եւ ոչ թէ անձի մը պաշտօնէն:

«Մաֆի» նշած է, թէ փաստաբանները եւ սեփական վարժարաններու ուսուցիչները երեք օր տեւողութեամբ գործադուլի կը դիմեն:

Ըստ «Պայրաք»-ի, Լիբանան եւ մալեպիական բանակցութիւնները կեդրոնացան բնական կապի մարզին մէջ ներդրումներու եւ սեփականաշնորհման գործընթացին մասնակցութեան վրայ:

Լահուտ Մոհամետին յայտնեց, որ Իրաքի դէմ պիտուրական ընտրանք չկայ ... եւ թէ արաբական նախաձեռնութիւնը խաղաղ ու թեան առանցքն է, նշած է թերթը:

Ըստ «Պայրաք»-ի, Իրաք համաձայնագիր մը կնքեց դիւրացնելու համար քննիչներուն թղթածրարին առընչուող վերջին իրադարձութիւնները, նշած է թերթը:

«Նահար» գրած է, թէ իրաքցի պատուիրակը կը վստահեցնէ, թէ իրաքցիները պիտի պաշտպանեն իրենց նախագահը, իսկ Փարիզ դիտել կու տայ, թէ պատերազմը արգիլելու համար պիտի գործածէ վերջինի իր իրաւունքը:

«Մուսթաքպալ»-ի համաձայն, Ռամաֆելտ յայտարարած է, թէ դիւանագիտական ընտրանքը վերջ գտած է Իրաքի համար:

Ըստ «Տէլի Սթար»-ի, Իրաքի համար ժամերը կը սկսին հաշուելու ըլլալ եւ Պիքս կը յայտնէ, թէ տակաւին բաւական աշխատանք կայ եւ այդ պատճառով յաւելեալ ժամանակի կարիք կայ:

«Տիար» յայտարարած է, թէ Պաղտատ պիտի ըլլայ իր թշնամիներուն գերեզմանը:

«Քիֆահ Արապի» նշած է, թէ Ռամաֆելտ ցաւ կը յայտնէ դիւանագիտական ընտրանքին առնչութեամբ, իսկ Փաուրը կը ծաղրէ վէնքի քննիչներուն համաձայնութիւնը:

Ըստ թերթին, Քոֆի Անան կը յայտնէ, թէ ահաբեկչութեան դէմ

պայքարը չի նշանակեր պատուութեան կաշկանդում:

Պաղտատին եւս հարցին մասին «Տիար» նշած է, թէ պաղեստինեան իշխանութիւնը դիտել կու տայ, որ Իսրայելը խանգարէ ընտրութիւնները՝ պաղեստինեան հողամասեր բռնագրաւելով: Ըստ թերթին, Սուրիա կոչ կ'ուղղէ միջազգային համագումար մը կայացնելու, որպէսզի ահաբեկչութիւնը պատրուի ժողովուրդներու ապստաղական պայքարէն:

«Պայրաք» օրաթերթին համաձայն, ՄԱԿ Ապահովութեան խորհուրդը վաւերացուց ահաբեկչութեան դէմ յայտարարութիւն մը, իսկ Քոֆի Անան կոչ ուղղեց ընդդիմադիրները չչարչարելու:

«Մաֆի» գրած է, թէ Համաս եւ Լիբուտ կը քաշուին առ ի բողոք ընդդիմուր պիտուրիւն: Ըստ թերթին, պաղեստինեան երկխօսութիւնը անել կացութեան դէմ յանդիման կը գտնուի:

Ուաշինկթոն եւ Եւրոպական Միութիւնը կառչած կը մնան միջազգային քառակիսի: Իսրայել կը խստացնէ բնակարաններ քանդելու իր քաղաքականութիւնը: Թերթը նաեւ նշած է, թէ ահաբեկչութեան շուրջ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի ժողովը շեշտեց ահաբեկիչներուն կողմէ հաւաքական քանդումի վէնքերու ձեռքբերման եւ գործառնութեան վտանգը:

LOST

ԵՐԱՄԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բեմադրիչ **ՆԱՐԵԿ ՏՈՒՐԵԱՆ**
 Լիբանանի մէջ կը ներկայացնէ
«WELCOME TO GLENDALE»
 Կատակերգութիւնը 2 արարով

Ուրբաթ, 7 Փետրուար 2003, ԿԱԱ, Շաբաթ 8 եւ Կիրակի 9 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:30ին, Կիրակի 9 Փետրուար 2003, ցերեկոյ. կէսօրը ետք ժամը 4:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» քառերգարանին մէջ:
 Տնօրէնը ստանալ՝ ԼՕԽ.ի Չեարուեստի խանութը.
 Համագայիցի Գրատունը. Anto Sport-էն, Longine Հաստատութիւն - Վայէ Աղաճեան - Ժայէ Ելիպ, Գրատուն Կոմիտաս - Zokak El Blat, ԼՕԽ.ի Չըքայնի վարչութեան Գրատունակը:

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆ

(ՀԱՏՈՒԱԾ ԳՐԵԻՑ)

Վաթսունվեց թուականին եմ եղել Պէջրու-թում առաջին անգամ (առաջին այցս արտա-սահման)։ Կապիտուլացի քաղաք էր, տեղացի-ներն ասում էին սա՛ Արեւելքի Փարիզն է՛, Իսկապէս ամէն ինչ շրջանով էր, բայց ամե-նազարմանալին էն էր, որ հայկականու-թիւն էր տեսնում ամէնուր, խանութները ցուցանակները սկսած։ Էնպիսի տպաւո-րութիւն էր՝ թէ հայկական քաղաքում ես գտնուում։ Ասում եւ պնդում էին, թէ երկու հարիւր հազար հայուիւն կայ Պէջրու-թում։ (Աւելի շատ քան Արցախում)։

Յամենայնդէպս երեքից աւելի թատե-րախմբեր կային, կուռ ու պինդ, որոնք ղե-կավարւում էին շատ տաղանդաւոր մարդ-կանցով։ Ժողովրդային թատերախմբերը (Մեծ յենարան կը լինէր հաս-մեզ համար եթէ մնար էն քանակին, տնտեսական էն կա-րողութիւններին, մշակութային էն մակար-դակին)։ Իսրայէլի հետ երկարատեւ պատե-րազի տարիներին շատ-շատերը լքեցին Լի-բանանը, հիմնականում տեղափոխուեցին Միացեալ Նահանգներ։ Էսոր էլ արդէն նոս-րացած հայեր հոգը չի դադարում, գաղթը շարունակուում է։ Ափսոս, հազար արհու-րանի որ պէջրութեան շատ-շատերը ըստ էու-թեան սփիւռքահայութեան կենտրոնն էր, հայկականութեան գաղափարակիրը։ Ամէն, ամէն ինչով օրինակ էր միւս գաղութներ, ամառայնքերի համար։ Համայնքի գլուխ էին կանգնած տարբեր կուսակցութիւնների պատկանող հզօր անհատականութիւններ, որոնք պարու էին անանձնական կեանքով, կիրթ էին, իմաստուն, հայրութեան տէրը։

Յիշենք, որ էդ գաղութի ազգայնական հիմքերը դրել էին հայոց երեւելիներ Աղբա-րանը, Վրացեանը, Դրոն, Շանթը, Գերսամ Ահարոնեանը, Անդրանիկ Մառութեանը ու էլի շատ ու շատ մեծեր։ Հայրենասիրու-թեան, բարոյականութեան, կրթութեան մի գարմանալի մթնոլորտ էին ստեղծել նրանք, որից սնուում, որի մէջ աճում էր մատաղ սե-րունդը։ Դպրոցներ էին յաճախում (ի դէպ ե՛ւ դաշնակցականներին, ե՛ւ բարեգործակա-նի հովանու տակ գտնուող), աշակերտները արտասանում էին Հայրենիք բառը ու զնգում էր նրանց հուշերը։ Թուում էր՝ ամ-բողջ պարու շնչում էր, ապրում էր Հայ-րենիքի կարոտով, միացեալ Հայրենիքի գա-ղափարով։

Էդ դաստիարակութիւնը ստացած, էդ մեծերից սերուած ու սնուած մտաւորական է նուազեանը։ Մի մարդ, որ իր տաղանդը, գիտելիքները, իր ողջ ունակութիւնը ան-մասնորոշ տուեց իր ժողովրդին։ Ամենաման-տարիներին անգամ չդադարեց գործել, աշ-խատել, արարել։ Սփիւռքում հայութեանը հայ պահելու առաքելութիւնը կատարեց հայ մտաւորականի ամենաբարձր պատասխա-

նատուութեամբ։

Մի անգամ չէ, որ նկատել եմ, համոզուել եւ ասել՝ Սփիւռքի ազ-գային, քաղաքական, դպրութեան, մշակութի գործիչները հերոսներ են, անձնուրաց նւիրեալներ, իսկա-կան առաքեալներ։ Դրանց շարքում է (առաջին տեղերում) իմ սիրելի ըն-կերը՝ Վարուժանը։

Հազար իննհարիւր եօթնասուն չորս թուականին երկրորդ անգամ եղալ Պէջրութում, էս անգամ Հեն-րիկ Մալեանի եւ Գէորգ Հայրենի հետ, որն էն թուերին «Պետկինոկո-միտէի» նախագահն էր։ Հայկական կինոֆիլմերի փառատուն էր կազմա-կերպել «Բարեգործականը»։

Պէտք է հէնց սկզբից ասեմ, որ Հայրեն-անը, որին ես յարգում էի նրա ազգային էու-թեան համար (իսկապէս հղալիսին էր։ Պե-տական ակնառու գործիչ էր ու հայոց կի-նոյին բաւականին օգտակար եղաւ։ «Մենք ենք մեր սարերը», «Նուան գոյնը» եւ «Նա-հապետ» ֆիլմերը նրա օրօք նկարահանուե-ցին ու հէնց նա էլ շատ շարժարուեց դրանք Մոսկուայում ընդունել տալու համար, ար-տասահմանում մեր մասին եղած տասնհինգ թէ քսան օրերի ընթացքում իրեն բարձրու-թեան վրայ չպահեց։ Գրեթէ ամէն կինոդի-տուումից յետոյ ճաշկերոյթներ էին լինում. մեզ յարգում ու սիրում էին, գուրգուրում էին ով ինչպէս եւ ինչքան կարող էր։ Հայ-րենիքի կարօտը մեզանից էին առնում, իսկ Հայրենիքի նկատմամբ դեռ ակնածանք կար, դեռ սէր կար ումանքի։ Ընդհանրա-պէս ինչ հաւաք էլ լինէր, Հայրենանը մի տե-սակ կերպարանափոխում էր, կորցնում էր կոպիտ, տգեղ, յիմար բաներ խօսել։ Մէկ էլ տեսար չերեցող ինչ որ հակառակորդի հետ սկսեց կռիւ տալ, հաթախ տալ՝ «Մենք հզօր ենք, մենք թանկեր ունենք, ոչ մի բանի առաջ կանգ չենք առնի, մենք ոչ մէկից չենք վախենում, եթէ պէտք լինի մեզ վրայ ատո-մային ուժեր էլ կը նետենք...»։ Ու նման տխմարութիւններ։ Կամ էլ չեղած տեղը (ի դէպ յարգանքի ու սիրոյ մթնոլորտում) կը սկսէր կատաղի յարձակումները Դաշնակ-ցութեան հասցէին։

Մի խօսքով նման ու նման անհաճոյ բա-ներ։ Շրջապատի մարդիկ եւ կիրթ էին, ե՛ւ դաստիարակուած, ե՛ւ համբերատար։ Յար-գանքով, ամօթից դուրսները կախ՝ լուծւ էին, կամ էլ փորձում էին նրբօրէն փոխել խօսակցութեան նիւթը։

Կինոդիտումներից առաջ, սակայն, ինքը չէր խօսում, Հենրիկն էլ գլուխ չունէր, խու-սափում էր, էդ բեռը դրել էին ինձ վրայ՝ ես էի ներկայացնում գործող անձերին, ըն-մադրելին, պատմում էի «Հայֆիլմ»ի աշխա-տանքների, ծրագրերի մասին եւ այլն։ Գի-շերը (ապրում էինք «Ալքազար» հրաշալի հիւրանոցում, հէնց ծովափին։ Հիմա էդ հիւ-



րանոցը չկայ որքան գիտեմ, ուժբակոծ-ւեց)։ Հայրենան ուրեմն սկսում էր ինձ դիտողութիւններ անել՝ «Հայաստան ասե-լիս ինչո՞ւ ես մոռանում չե՞տեմ՝ Սովետա-կան։ Կուսակցութեան ղեկավար դերի մա-սին ոչինչ չես խօսում...», ու նման բաներ։ Համբերութիւնս հատաւ մի օր էլ, ասա-ցի՝ իմ խօսքերը ձեզ դուր չի գալի՞ս. դուք խօսեցէ՞ք, ես ձեռն պրոպագանդիստը չեմ։

- Ես հէնց դրա համար էլ քեզ բերել եմ, քեզ չէին թողնում, կենտրոնում դէմ էին, ասացի անկուսակցական է, նրա խօսքին կը հաւատան... - Շնորհակալ եմ, բայց հէնց վաղն էլ կա-րող եմ ետ գնալ...

Ինչպէս նաացի խայտառակ էին նրա երոյթները յատկապէս երբ հանդիպում էինք դաշնակցականների հետ՝ «Ձեր Ալ-բայեանը, ձեր Շանթը, էս ինչ թոււին էս ասացին, էն ինչ թոււին՝ էն... Ձեր Դրոն, Վրացեանը, էնտեղ ճիշդ չէին, էնտեղ սխալ էին...»։

Եւ Հենրիկը, եւ ի հարկէ ես, պարզապէս տառապում էինք նրա ձեռնին։ Մի հանդի-պումից յետոյ երբ վերադառնում էինք հիւ-րանոց, ես չզիմացայ, ասացի՝ Գէորգ Ար-մենակիչ, էսոր յատկապէս ձեզ շատ վատ պահեցիք, շատ սխալ խօսեցիք մանաւանդ որ համոզուած չեմ թէ Աղբալեանի, մեծ մտաւորականի ու գրականագէտի վաստա-կին դուք տեղեկ էջք, կամ չէք զնահատում նրան։

Շառագունեց իմ անսպասելի ու յան-դուզն դիտողութիւնից, մի տեսակ փքուեց, լարուեց, բայց իրեն զսպեց, լուեց։ Երբ ար-դէն բաժանուում էինք, մի տեսակ մեղաւորի նման ասաց՝ տղաներ, բա ի՞նչ անեմ, գի-տէ՞ք քանի աչք է մեզ հետեւում։

Ո՞վ գիտէ, գուցէ աւելին գիտէր քան մենք, իրանց կուսակցական խարդախու-թիւններից։

ՍՍՍ ՍԱՐԳՍԵԱՆ

(Շար. 1)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ

Մեր երէց սերունդները կարեւորութիւն կու տա-լին գիրքին եւ ընթերցանութեան։ Մեծ Եղեռնէն ետք, երբ հայութեան բեկորները եկան եւ հաստատուեցան Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, նորահաստատ գաղութ-ներու բնակիչներուն առաջին նպատակներէն եղաւ կազմակերպումը, հայապահպանումը, կրթութիւնը։

Պէտք էր ապրիլ այն ժամանակաշրջանն ու տես-նել, թէ ինչպէս դաղթական հայութեան առաջին եւ երկրորդ սերունդները կարեւորութիւն տուին գիր-քին։ Ընթերցանութիւնը այդ սերունդներուն մօտ անհրաժեշտութիւն մըն էր, ինչպէս օրը, ջուրը եւ հա-անհրաժեշտ սկզբունք էր այն, թէ ո՞չ միայն հացով կ'ապրի մարդ, այլ նաեւ՝ (ազգային ու հաւա-քական մակարդակի վրայ) գիտութեամբ, կրթու-թեամբ եւ միտքի զարգացումով, իմա՛ կենդանի խօս-քով։

Երանելի օրեր էին։ Տակաւին նիւթապաշտու-թիւնը իր ժխտական աւերները չէր գործած մարդոց հոգեւոր - բարոյական արժէքներուն մէջ։ Տախտա-կաչէն եւ թիթեղաչէն տնակներուն մէջ հայ մարդը հասակ կ'առնէր։ Շատ յաճախ, սակայն, գոյութիւն ունեցող տնտեսական եւ ընկերային դաժան պայ-մանները առիթ չէին տար, որ անոնք շարունակէին իրենց ուսումը...

Ու մանկութեան փոքր տարիքէն անոնք ստիպ-ւած կ'ըլլալին նետուելու գործի ասպարէզ, որպէս-զի իրենց եւ իրենց ընտանիքին օրուան հացը ճարեն։ Բայց հաւաւասիկ այստեղ ի յայտ կու գար հայուն իս-կական դիմագիծը։ Պանդխտութիւնը եւ կեանքի դժուարութիւնները ցմրոր ճաշկերպ հայր իր մէկ կողմ դրած գումարով բաժին կը հանէր թերթ եւ գիրք գնելու, անոր համար իրենազարգացումը կը դառնար նպատակ։

Այո, երանելի օրեր էին։ Դպրոց յաճախել ուզող անհատը կը գրկուէր այդ մեծ հաճոյքէն, որովհետեւ իր ծնողը իրապէս անկարող էր նիւթական գետնի վրայ։ Ո՛չ թէ մեր օրերուն պէս, երբ ինչ - ինչ պատը-րակներով հայ աշակերտը իր իսկ ծնողին պարտադ-րանքով դուրս կը բերուի հայկական վարժարանէն եւ կը սկսի յաճախել օտար ճարտարան։

Անցեալի դժուարութիւնները ոչինչով կը համե-մատուին մեր այսօրուան իրականութեան հետ։ Ներ-կայիս մարդիկ աւելի հանդիստ են նիւթական - տնտե-սական գետնի վրայ, բայց բարոյական «անոր» հաս-կացողութեամբ կը պարզուի ամբողջութեամբ հակա-ռակ պատկերը սփիւռքեան հին եւ նոր սերունդնե-րուն միջեւ։ Ժամանակի թաւալքին արագ թա՛փն է ասոր հիմնական պատճառը, թէ արհեստագիտու-թեան զարգացումն ու նոր ու խորթ արժէքներու ներ-թափանցումը մեր ընկերութեան մէջ է։

Ու հոս կու գանք հարցնելու հետեւեալ հարցումը։ Մեր կեանքին մէջ ո՞ր ենք այսօր ընթերցանութեանն եւ «գիրք» հասկացողութեանն։ Ո՞վ լուր ունի, թէ վեր-ջին տարուան ընթացքին քանի՞ հայերէն գիրք լոյս տեսած է, ի՞նչ բովանդակութեամբ, ի՞նչ քանակով։

Ընթերցանութիւնը մարդկային էութիւնը վերանո-րոգող եւ հոգեփոխող հասկացողութիւն է եւ պէտք է շեշտել անոր յատուկ կարեւորութիւնը մեր անհա-տական հոգեմտաւոր կեանքի կազմաւորման մէջ։ Ներկայիս կան, գոյութիւն ունին բազմաթիւ հրատա-րակութիւններ, լոյս կը տեսնեն գիրքեր՝ բազմակող-մանի հետաքրքրութիւններով։ Անոնց իրական գնա-հատականը պիտի տայ միայն ու միայն ընթերցող ան-հատը, որպէսզի բուռն քննադիւմներու ճամբով բիւ-րեղանայ մեր բրակն եւ մտաւորական կեանքը, եւ միեւնոյն ժամանակ գիրքերը չմանան... պահեստարան-ներուն մէջ դիզուած։

Անհրաժեշտ է ամէն գնով շեշտել ընթերցանու-թեան կարեւորութիւնը մեր կեանքին մէջ։

ԺԱԲ ՅԱԿՈԲԵԱՆ

ԹՄԲԿԱՀԱՐ ՍԵՂՐԱԿ ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ ՊՈՍԹԸՆԻ ՄԵՋ

Presented to
Setrak Sarkissian
The King of the Oriental Drums
With deepest appreciation
Thomas Menino - Boston Mayor
December 2002

Լիրանանահայ հանրածանօթ թմբկահար Սեղրակ Սարգիսեանը պարգևատրուելու համար, Դեկտեմբե-րին, Պոսթընի «Վրճճ» հաստատութիւնը կազմա-կերպած է մեծարանքի հանդիսութիւն մը։ Հաստա-տութիւնը զայն պատուած է իրբու միջազգային թմբկահար։


Նոյն նպատակով, Պոսթընի քաղաքապետ Թովմաս Մէնինօ յատուկ ընդունելութեամբ մը գնահատած է թմբկահարը։

Ընդունելութեան ընթացքին Սեղրակ Սարգիսեան հանդէս եկած է երաժշտական քանի մը կատարում-ներով։

Քաղաքապետը իր խօսքին մէջ մեծապէս գնահա-տած է անոր արուեստն ու կարողութիւնները։ Վեր-ջինս Սեղրակ Սարգիսեանը իր լուսանկարը կրող յա-տուկ յուշատախտակով մը պարգեւատրած է, իրբու արեւելեան թմբուկի թագաւոր։

www.homenetmentcentral.com

ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ԲԾԵԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ



Տոքթ. Ողտա խօսքի պահուն

Լ ի բ ա ն ա ն ա հ ա յ նախաձեռնութեամբ եր-թօշկական Միութեան կուշարթի, 20 Յունուա-

www.hamazkayin.com

ASHJIAN TOURS
Ս. Յարութեան եւ 24 Ապրիլի առիթներով առաջին անգամ ըլլալով Լիբանանի մէջ 5օրեայ շրջապտոյտ - ուխտագնացութիւն 19էն 24 Ապրիլ. Հալէպ 2 գիշոր, Տէր Չօր 2 գիշոր, Սորակառոյց շքեղ հիւրանոցներ, այցելութիւններ Մարկապտի մատուռ, Հասիշ, Գամիշ-լի, Դամասկոս քաղաքները նաեւ Թամոր (Փայմիթի) անտառները։ Բացառիկ յայտագիր, յիշատակի նուէր-ներ, Եփրատի եզերք ճաշկերոյթներ. նաեւ՝ Հալէպի մէջ։
Սակ մէկ անձի սկսեալ փոխաճ 210\$ միայն 145\$ շատ սահմանափակ թիւով տեղեր։
Արձանագրութիւններ՝ կազմակերպիչ Աշտեան Թուրք։ Հեռ. 01-240654, 03-233978, գիշորները 01-258887։
Մի մոմօք դէպի Հայաստան 1-8 Մայիս քաղաքի շրջապ-տոյտ. սակ մէկ անձի 655\$ լճամ պտոյտներով նա պար-հանդէսով եւ հաճելի ամակակներով։

րի երեկոյեան ժամը 7:00ին, միութեան կեդ-րոնատեղիին մէջ տեղի ունեցաւ դասախօսու-թիւն մը «Արական ան-մայրութիւն» թե-մայով։ Հանդիսութիւնը կազմակերպուած էր «Ալ-Փա» ընկերութեան հո-վանաւորութեամբ։

Միութեան տեսնա-պետ տոքթ. Ժիրայր Թե-ւեքէյեանի բացման խօս-քէն ետք, խօսք առաւ օր-ւան դասախօսը՝ տոքթ. Ռաշիֆ Ռուտա։ Ան առա-ջին հերթին խօսեցաւ արական սեռային անբա-ւարարութեան ախտա-նշաններուն մասին, անդ-րադարձաւ անոր պատ-ճառներուն եւ եղաշրջու-մին, որմէ ետք մասնա-նշեց գոյութիւն ունեցող բուժման միջոցներուն եւ անոնց կիրարկման ձեւե-րուն մասին։

Ներկայ էին լիբանա-նահայ բժիշկներ, որմէ ետք տեղի ունեցաւ հիւ-րասիրութիւն։

ԵՐԵ
• Գործ կը փնտռեք
• Գործաւոր կուզեք
ԴԻՍԵՅԵԸ
Հեռ. 03-963499:

ԳՐԱՏՈՒՆ ՈՍԿԵՂԱՐ

- ★ Ունիմք ձեր փնտռած գիրքերը եւ բառարանները։
- ★ Մանկական գունատր գիրքեր, Երգարան եւ Երագահան։
- ★ Չարագումի միահատոր համայնագիտարաններ՝ Անգլերէն եւ Ֆրանսերէն։


Պուրճ Համուտ, Սուրբ Փրկիչ եկեղեցոյ կից.
Հեռ.։ 01/264750
P.O.Box: 11-8877, Beirut, Lebanon
E-mail: vosketar@yahoo.com

«ԱԶԴԱԿ»
ՀԵՒՆԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԴԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել
հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ ԹԵՀՐԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԳ՝ ՍԵՊՈՒՀ ԵՊՍ. ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԵՏ

Ստորեւ կու տանք շահեկան հարցազրոյց մը Թեհրանի հայոց առաջնորդ Սեպուհ Եպս. Սարգիսեանի հետ, զոր կատարեց «Ազգակ» վերջերս: Սրբազան հայրը կ'արժանանայ բեմի եւ ընդհանրապէս իրանահայութեան դիմագրաւած հարցերը, ինչպէս նաեւ գաղութի մեծ ճակատագրի մասին: Սրբազանը առաւելաբար կ'անդրադառնայ նաեւ իրան - Հայաստան պետական կապերուն եւ անոնց անհրաժեշտութեանը:

ՀԱՐՑՈՒՄ. - Որո՞նք եք իրանի հայ գաղութի առաջնորդը: Անոր դիմագրաւած դժուարութիւնները: ՊԱՏԱՍԽԱՆ. - Նախ կ'ուզեմ ողջունել «Ազգակ»-ի խմբագրութիւնը եւ ընթերցողները:



Իրանահայ գաղութի նորակազմ գաղութի չէ. անհարկաւոր տարիներու պատմութիւն ունի եւ այս գիտակցութեամբ է, որ մեր գաղութը այսօր իրանի մէջ կ'ապրի: Պատմութեան ընթացքին զանազան հանգրուաններուն, իրանահայ գաղութին թիւը նուազած կամ բարձրացած է: Իրանի իսլամական յեղափոխութենէն ետք, շատ մը այլ իրանցիներու նման, մեր ժողովուրդին գաւազանները նոյնպէս արտադրութեան դէպի Եւրոպա, Միացեալ Նահանգներ, կամ վերադարձան հայրենիք՝ Հայաստան:

Իրանահայ գաղութը այսպիսի վերիվայրուածներէ ետք է, որ ներկայիս իր ձեւաւորումը ստացած է: Ներկայիս 140-150 հազար հայութիւն կայ իրանի մէջ: Սոսեւիով թեհրանի թեմին մասին, կրնամ յստակօրէն ըսել, որ աւելի քան 90 հազար հայութիւն կը հաշուէ:

Ըսեմ նաեւ, թէ իրանահայ գաղութը այն գաղութներէն է, որ ինքզինք միշտ մէկ մասը նկատած է հայրենիքին, իր հիմնական առաքելութիւնը եղած է միշտ իր ամբողջական հայրենիքի տեսիլքովը ապրի: Հագուած է իրանահայր կեանքի մէջ իսլամական յեղափոխութենէն ետք:

Պ. - Բնական է, որ յեղափոխութեան առաջին օրերուն, ինչպէս բոլորը՝ երկրին մէջ ունեցանք դժուարութիւններ: Բայց յեղափոխութիւնը իր փորձառական ժամանակահատիցէն անցուց եւ պէտք է ըսել, որ այսօր իրանի մէջ որեւէ այլ ժամանակէ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կը գործենք: Մեր իրաւունքները, որպէս փոքրամասնութիւն՝ իրանի սահմանադրութեամբ պաշտօնապէս ճանչցուած են: Ունինք նաեւ այլ իրաւունքներ, օրինակ՝ մենք է, որ կը տնօրինենք ժամանակակից հասարակական կապերը: Նախապէս՝ քրիստոնեային արտաքին իրաւունքներուն հետ: Այս իրաւունքները կ'ապահովուեն իրանի իսլամական խորհրդարանին մէջ մեր երկու պատգամաւորներէ:

Ղ. - Կարելի՞ է անդրադառնալ իրանի թեմական կեանքին: Պ. - Իրանի մէջ ունինք 3 թեմեր: Հնագոյնը՝ Արարատականի, այսպէս՝ Նոր Զուղայի եւ վերջապէս՝ Թեհրանի թեմը կազմաւորուած 1945ին, որ այսօր մեծագոյն թեմն է: Թեհրանի թեմին մէջ ունինք 14 գործող եկեղեցիներ: Ունինք 28 հայկական դպրոց՝ 6 մանկապարտէզ եւ 22 միջնակարգ - երկրորդական: Ունինք մշակութային, ընկերային, մարզական եւ բարեսիրական միութիւններ: Պէտք է ըսել, որ անոնց մեծամասնութիւնը կը գործէ Ազգային առաջնորդարանի հովանիին տակ, երեւոյթ մը, որ դժուար է գտնել այլուր:

Ղ. - Ինչպիսի՞ փոփոխութիւններ տեղի ունեցած են իրանահայ կեանքի մէջ իսլամական յեղափոխութենէն ետք: Պ. - Բնական է, որ յեղափոխութեան առաջին օրերուն, ինչպէս բոլորը՝ երկրին մէջ ունեցանք դժուարութիւններ: Բայց յեղափոխութիւնը իր փորձառական ժամանակահատիցէն անցուց եւ պէտք է ըսել, որ այսօր իրանի մէջ որեւէ այլ ժամանակէ աւելի նպաստաւոր պայմաններու մէջ կը գործենք: Մեր իրաւունքները, որպէս փոքրամասնութիւն՝ իրանի սահմանադրութեամբ պաշտօնապէս ճանչցուած են: Ունինք նաեւ այլ իրաւունքներ, օրինակ՝ մենք է, որ կը տնօրինենք ժամանակակից հասարակական կապերը: Նախապէս՝ քրիստոնեային արտաքին իրաւունքներուն հետ: Այս իրաւունքները կ'ապահովուեն իրանի իսլամական խորհրդարանին մէջ մեր երկու պատգամաւորներէ:

րուն եւ զազային իշխանութեան միատեղ աշխատանքին շնորհիւ: Այս փոփոխութիւնը ցոյց կու տայ իրանի իսլամական կառավարութեան բարեացակամութիւնը: Այլ հարց մը՝ մեր դպրոցներուն մէջ անցեալին բոլոր տնօրէնները պարսիկներ էին: 80ական թուականներուն նոյնիսկ առաջնորդը իրաւունք չուներ դպրոց այցելելու: Իսկ այսօր հայ տնօրէններ սկսած ենք ունենալ եւ ես, ինչպէս նաեւ Անթի-Նիոսէն Թեհրան ժամանող միտրաններ, սեւաբար, կ'այցելենք դպրոցները: Այս բոլորը դրական երեւոյթներ են գաղութի կեանքին մէջ, եւ ուրախալի է, որ Հայաստան-իրան բարեկամութիւնը իր դրական ազդեցութիւնը ունի այս բոլորին մէջ:

Ղ. - Այսօրուան շրջանային լարուած վիճակը ինչ անդրադարձ կ'ուճեցնայ իրանի վրայ: Պ. - Պէտք է ըսել, որ իրան չի սկսել չեզոքութիւն կը պահէ իրաւի հարցով: Իրան դէմ է պատերազմին, բայց նաեւ դէմ է հիւլէական կամ քիմիական ռուսներու գործածութեան:

Ղ. - Միջին Արեւելի գաղութները ունին իրենց առանձնապատկառ դժուարութիւնները: Ի տարբերութիւն արեւմտեան երկրներէն, ձուլումը նուազ շեշտուած սպառնալիք է, սակայն միւս կողմէ՝ արտագաղթը կ'ապահովուի: Ի տարբերութիւն իրանցիներէն, որոնք եւ մարդու իրաւունքները շեշտուած են շրջանի հայկական գաղութներուն մէջ: Այս շրջագիծին մէջ ինչ կարելի է ըսել իրանահայրութեան մասին:

Պ. - Այո՛, նշեալ երեւոյթները ընդհանրապէս բնոյթ ունին եւ իրենց ազդեցութիւնը ձգած են նաեւ իրանահայ կեանքին վրայ: Իրանը իր յարաբերութիւններուն շնորհիւ մէջ նոյնպէս կ'ազդուի տնտեսական տագնապներէն, եւ այդ կ'արտացոլայ գաղութի կեանքին վրայ: Այս իմաստով, գաղութը ունի տնտեսական, եւ որոշ չափով ընկերային դժուարութիւններ, սակայն այս բոլորը չեն ընկճեր մեր ժողովուրդին կամքը: Որեւէ ատեն, երբ հայր դժուարութեան դիմաց կը գտնէ ինքզինք, ներքին բնագոյն մը առաւել թափով կը գործէ եւ կը ստեղծագործէ:

«Բ Ա Գ Ի Ն» ԱՄԱՌ - 3 - 2002

«ԲԱԳԻՆ» Գրական ամսագրի թիւ 3 - Ամառ համարը հրատարակելի վրայ է արդէն: Քիչ մը ուշացած, բայց դարձեալ լոյս տեսած այս թիւը կը բացուի իրանահայ բանաստեղծ վարանդի երեք թերթուածներով: «Արիական», «Մեղքի կիրակի» եւ «Կապոյտ իմ թռչուն»: Երեքն ալ մտքի ու հոգիի թրթռումներուն միաձուլուած արտայայտութիւններն են, ազգային զանգերու հասցեագրուած ուրախ ու տրտում, պանծալի ու վարանոտ տրամագրութիւններով թաթաւուն: Վարանդի այս բանաստեղծութիւնները խոհական ու զգացական մտորումներու զեղեցիկ արգասիքներն են, սրամիտ եւ հնչեղ, խորքով թէ՛ ոճային ինքնատպուլթեամբ:

Վազգէն Շուշանեան ներկայութիւն է այս թիւին մէջ եւս, իր արժէքաւոր եւ ուսանելի օրագիրով: Ամսագիրին 14 էջերը գրաւած օրագրական տողերը գրուած են 1936, 1937, 1938 թուականներուն, այն տարիներուն, երբ համայնավար տիրապետութիւնը ազգային շիջուկ կը հնձնէր սթալինեան աւերակող բռնակալութեամբ, մանաւանդ Հայաստանի մէջ կատարուող երկրորդ ջարդերու տարիներուն: Անոնց արձագանգները հասած ըլլալով Եւրոպա, Վազգէն Շուշանեան խոր հետաքրքրութեամբ ու մտահոգութեամբ հետեւած է համայնավար շարժումին բոլոր ձեւերուն, երեւոյթներուն, վերլուծած, քննարկած է համայնավար կեդրոնական իշխանութեան հրատարակած «օրէնքի յօդուածները», առ այդ կատարելով իր մեկնարանութիւնները, ազատ գրիչով, անկախ մտածողութեան տէր գրագէտի խղճամտութեամբ: Ծառ հետաքրքրական այս վերլուծումները քիչ անգամ տրամագրուած են մեզի այսօրու յստակ բացատրողականով, քաղաքական, գաղափարական երեսներով: Կարդացողը միայն պիտի կարենայ չափել անոր տարողութիւնը:

Պէպօ Սիմոնեան ներկայացուցած է երկու բանաստեղծութիւն: «Մէր» եւ «Աւերման Յաւեր» խորագիրներով, որոնք կեանքի եւ մահուան, սիրոյ եւ վախճանական աւարտին շուրջ խորհրդածութիւններ են: Նոր անուններու շարքին՝ Սալի Բիւրքեան եւ Սոնիա Քիլիճեան ստորագրած են սիրային թեմաներով բանաստեղծութիւններ:

Պողոս Սնայանեան կը կարդանք երկարաշունչ պատմուածք մը՝ «Օղակներ», ընկերային ու մշակութային մեր կեանքին առնչուած նիւթով: Իր այս պատմուածքով «Բագին»-ի խմբագիրը կ'արժանանայ նաեւ հայ ժողովուրդի ճակատագրին ցաւոտ մէկ հարցը, Սանճաքի պարպումի ժամանակաշրջանին արձանագրուած դէպքեր, ուր հայ եւ խորհրդային հանդիպին իրարու, մէկը իր գազանացած խիղճով, միւսը՝ վրիժառու յեղափոխականի խոնուածքով: Հոն կը հանդիպին նոյնպէս թրքատիպ հայուն, որ դաւեր նիւթած է ընդհանրապէս լրտեսի ու դաւաճանի արարքով:

Վիպակի մը՝ «Ամառային Անձրեւ» խորագիրով, առաջին մասը կարդացինք: Գրած է Սուրէն Չեքիճեան, որ ամենայն համարակալութեամբ կը նկարագրէ կնոջ մը հետ իր հանդիպումը: սիրաբանութեան մը մանրամասն պատկերով:

«Բագին»-ի այս թիւով կը կարդանք Ժան Փօլ Սարթրի «Դոնփակ» խորագրեալ թատերակին թարգմանութիւնը: Խմբագրութիւնը ներկայացուցած է այս թարգմանութեան առաջին մասը: նիւթը «բանականութիւն» եւ «անմեղ մեղաւոր»ներու բախումն է, որ տեղի ունեցած է աւելի քան կէս դար առաջ, բայց կը պատկերացնէ բոլոր ժամանակներու հակասութիւնները, կը նշէ խմբագիրը:

Իմացական Շարժումը բաժինը կը բացուի հայրենի գրականագէտ Ռաֆայէլ Համբարձումեանի ստորագրած քննական-վերլուծական յօդուածով՝ «Միասնական ուղղադրութիւն գոյացնելու առաջին քայլը պիտի կատարի Հայրենիքը» խորագրեալ: Ան կ'անդրադառնայ արեւելահայ եւ արեւմտահայ լեզուաճիւղերու ուղղադրութեան միացման, մէկ ձեւի վերածման: Տրամաբանական ու ողջախոհ փաստարկումներով յօդուածագիրը կը բաղձայ, որ օր մը վերադառնանք Մերտայան ուղղադրութեան, համայնագրով:

Մատթէոսեան եւ Ս. Տէյրիմէնեան հետաքրքրական երկ մը ներկայացուցած են Կոստան Զարեանի եւ Անդրանիկ Ծառուկեանի մասին, երկու գրագէտներու նամակագրական կապին եւ տարբեր տարիներու անոնց հանդիպումին՝ Իտալիա, Պէյրութ եւ Հայաստան, վերջինը՝ 1969ին, Երեւան: Աւելի քան կէս դար առաջ կատարուած նամակագրութեան մը արձագանգները, երկու գրագէտներուն միջեւ ստեղծուած յարաբերութիւնը կ'ապա թիւրիմացութիւնները տեղ գտած են հոս: Այս բաժինով կը տեղեկանանք նաեւ այնպիսի մանրամասնութեանց, որոնք քիչ մը կը զարմացնեն, քիչ մը կը հիացնեն եւ մասամբ կը վրդովեն ընթերցողը: Հարկ է կարգաւ, որպէսզի իմանանք, թէ ինչքան պատահած են 1945էն մինչեւ 1969, մօտաւորապէս 25 տարիներու ընթացքին, ուր կը

հանդիպին նոյնպէս ժամանակակից այլ գրողներու եւ արժէքաւոր դէմքերու վկայութեանց:

Միսաք Մեծարեանի թերթական արուեստին մէջ օգտագործուած բառերու իմաստին ու խորհրդանշական բնոյթին մասին երկու ուսումնասիրութիւն մը կատարած է հայրենի բանասէր Կարինէ Առաքելեան: Այս աշխատասիրութեան վերնագիրն է «Բառի անուանողական եւ դնահատողական արժէքը Մ. Մեծարեանի քնարագրութեան մէջ»: (Առջն ուսումնասիրութիւնը Բ. մասն է «Բագին»-ի Գարուն, Բիւ 2, 2002 համարին մէջ տպուած առաջին մասին):

ՆՇՄԱՐՆԵՐ բաժինը ունի հետաքրքրական հարց մը, որ կը վերաբերի «Իմ սիրելիս» վերնագրով հանգուցեալ բանաստեղծ Գառնիկ Աղդարեանի մէկ քննադան թերթուածին: Միայն թեմայով ստեղծուած այս բանաստեղծութեան կարգ մը բառերը փոխելով, «Իմ սիրելիս»ը հասցեագրուած է «Հայր Սթալինին»: Զարմանալի ապրումներ են նման արտայայտութիւններ, զորս ունեցած են մեզի ծանօթ բանաստեղծներ, արտասահմանեան իրենց ազատ աշխարհէն:

Այս թեմային ուղղուած է «Նշմարներ»ը, ուր կ'ակնարկուի նոյնպէս Աղասի Խանճեանի սպանութեան «առեղծուածին»: Չենք ուզել մտնել Հարցին մանրամասնութեան մէջ, այլ պիտի ուզէինք, որ գրասէրներ (գոնէ) կարդային այսպիսի փաստացի վկայութիւններ, թարմացնելու համար իրենց մտածումներն ու զգացումները, մեզմէ ոչ շատ հեռու անցեալին կատարուած «քննադաններու եւ պնակալէցութիւններուն մասին»:

Գարձեալ գարմացնող «նորութիւն» մըն է ընթերցողին համար «Ուշացած դիտողութիւններ» վերնագրուած նշմարը, ուր կը հանդիպենք անցեալի մեր պատուական գրիչներու օրերու ունեցած միջադէպերու, դրուագներու: Հոս կը հանդիպինք Ա. Արփիարեանի, Ե. Օտեանի եւ այլ պատուական անուններու:

«Բագին» Ամառ թիւ 3ը կը փակուի Մշակութային Լուրերով:

Այս առիթով անգամ մը եւս յիշեցնենք, թէ «Բագին» ամսագրի 40ամեակն է այս տարի: Մեր փափաքն ու բաղձանքն է, որ ընթերցող հասարակութիւնը, մանաւանդ գրասէրները անտես չընէին այս թանկագին հրատարակութիւնը եւ նոր գարթօնքով պատուէին գայն, տեղեակ մնալու համար մեր օրերու գրական նորութիւններուն, առաւել մտերմանալու հայ գրականութեան անդամատանին մէջ ծաղկող, նոյնպէս անցեալին մեզի յանձնուած արժէքներուն հետ:

ՇԱՀԱՆԳՈՒԽՏ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԲԱԳԻՆ (ԱՄԱՌ, 3 - 2002)

ԱՄԱՌ, 3 - 2002

40
1962-2002

ԲՈՎԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

- 1.- ՎՍՐԱՆԳ..... Բանաստեղծութիւններ
- 8.- Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ..... Օրագիր
- 23.- Պ. ՍՐՈՒՆԵԱՆ Բանաստեղծութիւններ
- 27.- Պ. ՍՆԱՊԵՆ..... Օղակները
- 46.- Ս. ԲԻՒՐԻՔԵԱՆ..... Խոստովանանք
- 48.- ***..... «Անձրեւ»-ային սկիզբ...
- 49.- Ս. ՉԷՔԻՃԵԱՆ..... Ամառային անձրեւ
- 63.- Ս. ԲԻՒԼԵՃԵԱՆ..... Կարօտ
- 64.- ***..... Ժան Փօլ Սարթրի «Դոնփակ»ը
- 65.- Ժ. Փ. ՍԱՐԹՐԻ..... Դոնփակ
- 85.- ***..... Ուղղադրական
- 87.- Ռ. ՀԱՄԲԱՐԶՈՒՄԵԱՆ.....
- Միասնական ուղղադրութիւն գոյացնելու առաջին քայլը պիտի կատարի հայրենիքը
- 91.- Վ. ՄԱՏԹԵՍԵԱՆ - Ս. ՏԷՅՐԻՄԵՆԵԱՆ.....
- Կոստան Զարեան եւ Անդրանիկ Ծառուկեան
- 111.- Կ. ԱՌԱՔԵԼԵԱՆ..... Բառի անուանողական եւ գնահատողական արժէքը Մ. Մեծարեանի քնարագրութեան մէջ
- 124.- ***..... Նշմարներ
- 133.- ***..... Մշակութային լուրեր

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը իմբացնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՐ 5:00: ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

www.aztagdaily.com

Միջապագային Քաղաքական Կեանք

ԿԱՍՊԵԱՆ ՈՒԺԱՆԻՒԹԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՐՑԱԿԱՆ ՏԱԿ

Անցնող տասնամեակին, Կասպեան աւազանը Եւրասիոյ տարածաշրջանին մէջ ամերիկեան քաղաքականութեան առաջնահերթութիւնը վայելած է: Ամերիկացի պաշտօնատարներ Կասպից ծովը նկատած են ուժանիւթի արտածման կարեւորագոյն տարածքներէն մէկը, ենթահող պատրաստելով նոր «մեծ խաղ»ի մը եւ բարձր ստեղծելով Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ շահագրգիռական ակնկալութիւններուն միջեւ: Ուժանիւթի այս պահեստները օգտագործելի վիճակի մէջ ղնեն ու կեդրոնական Ասիոյ եւ Կովկասի նորակազմ պետութիւններու զարգացումը ապահովելը առաջնահերթութիւնը եղած է Քիւնթընի վարչակազմին եւ Պուշին վարչակազմի գործունէութեան առաջին շահագրգիռները:

Սեպտեմբեր 11էն ետք, ամերիկեան ներկայութիւնը Կեդրոնական Ասիոյ մէջ, Միջին Արեւելքի տագնապը, Մ. Նահանգներ - Սէուտական Արաբիա կապերու վատթարացումը եւ աշխարհի տարածքին ահաբեկչական գործողութիւնները թերեւս խորհիլ տան, թէ Կասպեան շրջանի կարեւորութիւնը առաւել շեշտուած է: Բայց իրականութիւնը այդպէս չէ:

Վերջերս, «Շեվրոն Թեքսաք» ընկերութիւնը մերժեց ընդլայնել իր շահարկումները Ղազախստանի մէջ, շահարկում մը, որ կը հանդիսանայ տարածաշրջանի մեծագոյնը: Ղազախներ փորձեցին վերստին ներգրավել ուժանիւթի բնագաւառին մէջ շահարկողները, սակայն կատարեալ մէկ այլ ցուցանիշ էր, թէ Կասպից ծովը Միացեալ Նահանգներուն համար կորսնցած էր իր կարեւորութիւնը:

Շարք մը պայմաններ պատճառ կը հանդիսանան, որ այդ իրավիճակը շարունակուի:

Կազատար խողովակներու նկատմամբ քաղաքականութիւնը

Ամերիկեան արտադրողական մրցակցութիւնը Կասպեան տարածաշրջանը հակադիտի տակ առնելու՝ հիմնուած էր կազատար խողովակներու շարքին վրայ: Ռուսիա կ'ուզէր իր ազդեցութեան տակ պահել նախկին խորհրդային երկիրներէն քարիւղի արտածումը, մինչ Միացեալ Նահանգներ կը քաջալերէին կազատար անկախ խողովակներու ստեղծումը, որպէսզի կասպեան պետութիւնները ինքնավար ըլլան: Երկու կողմերն ալ շահաւոր դուրս եկան: «Մի. Փի. Սի.» խողովակը, որ Ղազախստանը կը կապէր Ռուսիոյ Սեւ ծովեան նաւահանգիստներուն, գործել սկսաւ: Անցեալ տարի, Պաքու - ձէյջան քարիւղատար խողովակը, որ նախկին Խորհրդային Միութեան փլուզումէն ետք տարածաշրջանին մէջ Ամերիկայի մեծագոյն նախաձեռնութիւնն է, սկսաւ կառուցուի: Պաքու - ձէյջանի յաջողութեանն էտք Ուաշինկթըն սկսաւ նուազ հետաքրքրուիլ Կասպեան շրջանով:

Ահաբեկչութեան դէմ պատերազմը

11 Սեպտեմբերէն ետք Եւրասիոյ մէջ Միացեալ Նահանգներու ուշադրութիւնը կեդրոնացած է անվտանգութեան շարքերու վրայ, եւ այդ՝ ի գին ուժանիւթի հարցի անտեսման:

Ահաբեկչութեան դէմ պատերազմին մէջ, Ազդեցիչ-ճան եւ Ղազախստան մեծ կարեւորութիւն չեն ներկայացներ:

Քաղաքական «նիսք»

Ղազախստանի մէջ շահարկում կատարելը նուազ նախաձեռնի դարձած է անցնող տարուան ընթացքին, որուն պատճառներն են փոստային խողովակը, ինչպէս նաեւ տուրքերու եւ համաձայնագիրներու հարցերու մէջ ստեղծուած թնձուկները: Միաժամանակ, Ղազախ կառավարութիւնը մտահոգութիւն յայտնեց ցուցած է օտար շահարկողներուն մօտ, խօսելով երկրին հարուստութիւնները պետականացնելու մասին:

Կազատար խողովակներու սակագոյն


Այժմ շահարկումի ամերիկեան մեծագոյն ծրագիրը Ղազախստանի մէջ է, ուր քարիւղի արտածումները «Մի. Փի. Սի.» կազատարով կ'անցնին Ռուսիայէն մինչեւ Վոստոկ: Ռուսական «Թրանսէֆթ» ընկերութիւնը, որ մենատիրութիւն հաստատած է քարիւղի փոխադրութեան բնագաւառին մէջ, պատճառ կը դառնայ, որ քարիւղի արտածումը նուազ հասուցաբեր ըլլայ շահարկող ընկերութիւններուն համար:

Միացեալ Նահանգներ - Ռուսիա գործակցութիւնը

Երկու երկիրներուն միջեւ սիրաբանութիւնը խորսխուած է ուժանիւթի հարցին մէջ: Պուշին վարչակազմը աշխուժութիւն նեցուկ կը կանգնի ուժանիւթի բնագաւառին մէջ Ուաշինկթըն - Մոսկուա գործակցութեան: Նման գործակցութիւն մեծապէս կ'ողջունուի Ռուսիոյ կողմէ, որ Պաքու - ձէյջանը կը նկատէ Միացեալ Նահանգներու կողմէ շրջան թափանցումի փորձ: Մեծ թիւով պաշտօնատարներ, ինչպէս նաեւ շահարկումներ կատարող ընկերութիւններ սկսած են Միպերիան նկատել «նոր կասպեան շրջան» մը:

Այս բոլոր պատճառներուն համար, հաւանական է, որ Կասպեան պետութիւններու նկատմամբ Միացեալ Նահանգներու շահագրգիռութիւնը նուազի, որուն իբրեւ արդիւնք՝ շրջանին մէջ արտաքին շահարկումները պիտի նստանան: Կասպեան ծովուն շուրջ 1990ականներուն բարձրացած աղմուկը կրնայ ի վերջոյ աղմուկէ աւելի ոչինչ ըլլալ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԽՈՒՍԱՆԱՒՈՒՄՆԵՐ



Իսրայէլի ընտրութիւնները բաւական մօտեցած են եւ այս ծիրէն ներս անցեալ երկու շաբաթներուն բազմիցս լսեցինք ներկայ վարչապետ Արիէլ Շարոնի տկարացած եւ ոչ նախանձելի դիրքին մասին: Շարոն (ինչպէս նաեւ իր երկու զաւակները՝ Օմիր եւ Կիւրա) կ'ամբաստանուի փոստային կաշառակերութեամբ: Արդարեւ, Իսրայէլի բնտարակաւ օրէնքին համաձայն, արգիլուած է ընտրաշաւին Ֆինանսաւորումը արտասահմանէն հասած ֆոնտերով կատարել: Իսկ 1999ի ընտրութիւններուն, Շարոն 1,5 միլիոն տոլար փոխ առած էր հարաւային փոխկրթի Միւրիլ Քըրնէն, Ֆինանսաւորումը համար իր ընտրաշաւը: Շարոնի ստացած այս գումարը ներկայ ընտրութիւններէն քանի մը շաբաթ առաջ մեծ գայթակղութիւն մը յառաջացուած է պատճառ դարձաւ, որ անոր ժողովրդականութիւնը մեծապէս նահանջէ:

Ջարմանալին հոն է, սակայն, որ Շարոն արտասահմանի իր մէկ բարեկամէն դրամ փոխ առած ըլլալուն համար, կ'ամբաստանուի, մինչ սկիզբէն ի վեր Իսրայէլի պետութեան գոյութիւնը, ըլլայ տնտեսական, ըլլայ գինուորական գետնի վրայ, միշտ ալ կախեալ եղած է ամերիկեան կառավարութիւններէն, ինչպէս նաեւ համաշխարհային Սիոնական համայնքէն հասած առատածեռն օժանդակութիւններէն: Հետեւեալը, ինչո՞ւ ամբաստանել Շարոնը այնպիսի արարքի մը համար, որ սովորական է այլեւս իսրայէլացիներուն համար...

Ինչ կը վերաբերի ընտրութիւններուն լոյսին տակ առնուած կարգ մը քայլերուն, կրնանք դիտել վարչակազմի մտադրութիւնը, թէ Իսրայէլ Պաղեստինի հանդէպ իր քաղաքականութիւնը սկսած է փոխել: Արդարեւ, մօտ երկու շաբաթ առաջ Իսրայէլի դերագոյն ատենադրեկան նեց ընտրական կեդրոնական խորհուրդին մէջ որոշումը, որուն հիման վրայ արար իսրայէլացի երկու երեսփոխաններու (Աճատ Թիպիի եւ Ազմի Պշարայի) կ'արգիլուէր

իրենց թեկնածութիւնը դնել Յունուար 28ի ընտրութիւններուն, գանոնք համարելով պաղեստինեան շահարկչութեան գործիք կանգնող թշնամիներ: Գերագոյն ատենին տուած այս յանդուգն որոշումը այն տպաւորութիւնը կը ձգէ, թէ ընտրութիւններէն քանի մը շաբաթ առաջ Իսրայէլ սկսած է շեղիլ Պաղեստինի հանդէպ իր կարծի դիրքէն եւ որ դեբրել ապատական տեսակէտներ:

Սակայն, որքանո՞վ կարելի է վստահիլ նման քայլերու անկեղծութեան...

Վստահարար, բոլոր այս որոշումներն ու քայլերը խաղեր են, որոնց մէջ Իսրայէլացիք թիւ մէկ վարպետներն են: Իսկ ներկայ պայմաններով լաւատես ըլլալը բոլորովին անհիմն է: Փաստօրէն, Իսրայէլեան երկու յատկանիշներ միշտ ալ յստակ եղած են:

Առաջինը այն է, թէ Իսրայէլեան ներքին քաղաքականութեան ընդհանուր օրէնքը միշտ ալ եղած է՝ «բոլորին ձրի» սկզբունքը, եւ նման միջոցով մը մէջ անկեղծութեան ու կայունութեան հետեք գտնելը բաւական դժուար առաքելութիւն մըն է: Արդարեւ, իսրայէլացի քաղաքական անձնաւորութիւնները միշտ ալ իրականութիւնը կրնայ յատկօրէն ցոյց տալ, թէ Պաղեստինը ու Միջնաւերջին սիոնական շարժումին այն երեսն են, որ միջազգային գետնի վրայ ընդունուած է. անոնք պարզապէս այն ժամանակաւոր հերոսներն են, որոնք հանդէպ կու գան պիտակու համար միջազգային ընտանիքին ու շարժումները, մինչեւ նոր «գիշատիչ բազէ» մը ծնունդը, որ պիտի գայ ստանձնելու սիոնական ծրագիրը իրագործելու եւ պաղեստինցիները յայտնաբերելու: Ամենայնդէպս, սիոնականութեան վարած քաղաքականութիւնը միշտ ալ եղած է խաբուութեամբ լի: Անիկա միշտ ալ տարբեր կերպարանքներով հանդէպ եկած է եւ իր դիրքը երեւութապէս փոխած է, իրագործելու համար իր դերագոյն նպատակը՝ Իսրայէլի ստեղծումը: Հաւանաբար, անոր նուազած մեծագոյն քաղաքական յաղթանակը պէտք է սեպտեմբերի 11ի ճիշտ համաձայնութիւնը, որով

կանութեանն մեկնած կրնայ հետեւցնել, թէ Իսրայէլացի քաղաքական անձնաւորութիւնները որքան ալ տարբեր սկզբունքներ ունենան եւ որքան ալ անձնական տարբերութիւններ ունենան իրարու միջեւ, միշտ ալ իբրեւ նպատակ կ'ունենան միեւնոյն ծրագիրին յաջողութիւնը՝ մեծ եւ հզօր Իսրայէլի մը ստեղծումը, որ վերջ պիտի դնէ պաղեստինեան գոյութեան...

Այո՛, կան կարգ մը ազատականներ ալ, ինչպէս Շարոնի նախորդէնուտ Պաղաքը եւ անոր ներկայ մրցակիցը՝ Ամրամ Միցնան, որոնք միշտ ալ «առանց նախապայմաններու խաղաղութեան բանակցութիւններ» կայացնելու մասին կը քարոզեն եւ կը խոստանան պաղեստինցիներուն արգար իրաւունք տալ, բայց արդար ըլլալու համար պատմութեան պէտք է ձգել նման անձնաւորութիւններու անկեղծութիւնը դատելը: Իսկ պատմութիւնը կրնայ յատկօրէն ցոյց տալ, թէ Պաղաքներն ու Միցնաները սիոնական շարժումին այն երեսն են, որ միջազգային գետնի վրայ ընդունուած է. անոնք պարզապէս այն ժամանակաւոր հերոսներն են, որոնք հանդէպ կու գան պիտակու համար միջազգային ընտանիքին ու շարժումները, մինչեւ նոր «գիշատիչ բազէ» մը ծնունդը, որ պիտի գայ ստանձնելու սիոնական ծրագիրը իրագործելու եւ պաղեստինցիները յայտնաբերելու: Ամենայնդէպս, սիոնականութեան վարած քաղաքականութիւնը միշտ ալ եղած է խաբուութեամբ լի: Անիկա միշտ ալ տարբեր կերպարանքներով հանդէպ եկած է եւ իր դիրքը երեւութապէս փոխած է, իրագործելու համար իր դերագոյն նպատակը՝ Իսրայէլի ստեղծումը: Հաւանաբար, անոր նուազած մեծագոյն քաղաքական յաղթանակը պէտք է սեպտեմբերի 11ի ճիշտ համաձայնութիւնը, որով

ԹՈՒՐԲՈՅ ՇՈՒՐՁ

ԹՈՒՐԲՈՅ - ԱՖՂԱՆԻՍՏԱՆ ՈՒՂՄԱԿԱՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Թուրքիա եւ Աֆղանիստան 16 Յունուարին ստորագրեցին զինուորական մարզումի, արհեստագիտական եւ գիտական համագործակցութեան համաձայնագիր մը: Թուրքիա, որ տակաւին կը ղեկավարէ Աֆղանիստանի մէջ գործող միջազգային խաղաղարար ուժերը, պիտի աջակցի Քապուլին՝ թիկնապահներու մարզումի, ոստիկանութեան կազմաւորումի, արհեստագիտական եւ գիտական մարզերուն զարգացման համար: Համաձայնագիրը ստորագրեցին խաղաղարար ուժերու թուրք ղեկավար գոր. Հիլմի Աքըն Զօրլու եւ Աֆղանիստանի պաշտպանութեան փոխ նախարար գոր. Պարիալայ, Աֆղանիստանի պաշտպանութեան նախարարութեան կեդրոնատեղիին մէջ: Համաձայնագիրը կ'ընդգրկէ համագործակցութիւն եւ աջակցութիւն՝ մարզումի, զինուորական հետախուզութեան, գումակային համակարգի, պաշտպանական արհեստագիտութեան, արխիւալին աշխատանքի, զինուորական առողջապահութեան եւ ծառայութիւններու, ռազմական ստեաններու, հաղորդակցութեան եւ անձնակազմերու պատրաստութեան մարզերէն ներս:

ՀԱՐԱԻ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՈՒՐԲՈՅ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԷՊԻ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵ ԿԸ ՆՈՒԱԶԻՆ

«Հարաւ-արեւելեան Անատոլի ծրագիր»ին («Ճի. էյ. Փի.») մէջ ընդգրկուած Թուրքիոյ շրջաններէն երկրորդ օրական եւ անասնապահական արտադրութիւնները դէպի միջին արեւելեան շուկաները՝ 2002ին արձանագրած են 22,4 առ հարիւրի նուազում: 2001ին «Ճի. էյ. Փի.» շրջաններէն 186 միլիոն տոլարի արտադրութիւն արժանութեան է դէպի Միջին Արեւելք, մինչ 2002ին արտածման քանակը կազմած է 145 միլիոն տոլար:

Կազմաւորութեան մէջ գտնուող «Հարաւ-արեւելեան Անատոլի Արտածողներու Ընկերակցութեան» պատասխանատուներ յայտնած են, թէ անցեալ տարի արտածուած է 12,5 միլիոն տոլարի մսեղէն, 43 միլիոն տոլարի ընդեղէն, շուրջ երկու միլիոն տոլարի մրգեղէն եւ 87 միլիոն տոլարի կերպասեղէն:

ԹՈՒՐԲՈՅ ՄԷՋ 2,4 ՄԻԼԻՈՆ ԱՆԳՈՐԾ

Աւելի քան մէկ միլիոն թուրքեր անգործ դարձած են անցնող երկու տարիներուն ընթացքին, Թուրքիոյ մէջ անգործութեան ընդհանուր թիւը հասցնելով մօտ 2,4 միլիոն քաղաքացիի: Թուրքիոյ հրապարակող Թուրքիոյ վիճակագրական պետական հիմնարկը կը մանրամասնէ, թէ 2001 - 2002 տարեշրջանին 1,078,000 թուրքեր «միացած են» անգործներու շարքերուն: 2002ի աւարտին 2,373,000 թուրք պաշտօնապէս արձանագրուած են իբրեւ անգործ: Այս թիւը կը կազմէ Թուրքիոյ աշխատող ուժին 9,9 առ հարիւրը: Այսուհանդերձ, կացութիւնը վիճակագրական հիմնարկի պատկերացուցած է շատ աւելի վատ է, որովհետեւ Թուրքիոյ մէջ աշխատող դասակարգին մօտ 53 առ հարիւրը պետական գրանցում չունի, նաեւ յստակ չէ ապօրինի աշխատողներուն եւ վերջին երկու տարիներուն աշխատանքէ դադարողներուն իսկական թիւը:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ

ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT
AND
SALE

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME
MEDICAL
EQUIPMENT
SERVICES

ՑՈՒՑԱՍՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ
ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅՇՏԻ ԾԵԼԵ, Բ. ՅԱՐԿ
ԳՆՈ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.

ԵՂՄԻՐ ԿԷԼԷ

Մ Ա Ր Զ Ա Կ ԱՆ



ԱՇԽԱՐՀ




ԷՆ. ՊԻ. Է3.

ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԹԵՆԻՍԻ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

ԱԿԱՍԻ ԵՒ ՖԵՐԵՅՐԱ ԸԱՍԱՆ ԿԻՍԱԲԱՐՏԱԿԱՆ ԸԱՆԳՐՈՒԱՆ

Երեք անգամ Աստրալիոյ թենիսի բաց մրցաշարքին տիրացած ամերիկացի Աստրե Ակասի (դասուած՝ 2րդ) երկ կապահովեց կիսաւարտական հանգրուանին իր տոմար, երբ քառորդ աւարտականին իր կատարած մրցումին 6-3, 6-2 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց իր մրցակիցը՝ 12րդ դասուած ֆրանսացի Սեպարաթիան Կրոմանը: 32 տարեկան Ակասի, որ Կրոմանի հետ (24 տարեկան) իր կատարած



Աստրե Ակասի

Ափրիկէ), որ միակ չդասուած մարտիկն ըլլալով կր մասնակցի կրան-շրէմի մրցաշարքին մը: Նշենք, թէ նախքան իր այս յաղթանակը արձանագրելը, Ֆերէյրա իր կատարած նախորդ երեք հանդիպումներուն պարտուած էր Ֆերէրոյէն: Աղջկանց քառորդ աւարտականին ի մրցումները ընթացան սովորական, առանց անակնկալի: 2րդ դասուած ամերիկացի Վինըս Ուիլիըմս 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց 7րդ դասուած Տանիէլա Վանթրոյշովան (Սլովաքիա), իսկ 5րդ

դասուած պելճիացի Ճասթին Հենի-Հարտենը՝ սպանացի Վիլիամ Ռուանո Փարուալը (6-2 եւ 6-2):



Ուելյն Ֆերէյրա

րած մրցումը աւարտեց երկու ժամէն, նախապէս այս կրան շրէմի մրցաշարքը շահած է 1995ին, 2000ին եւ 2001ին: Ակասի, որ կը փորձէ չորրորդ մարտիկը ըլլալով չորրորդ անգամ ըլլալով այս մրցաշարքը շահիլ, վերջին անգամ 1999ին է, որ պարտութիւն մը կրած է Աստրալիոյ մրցաշարքին, այդ ալ իր ազգակիցէն Վէնս Սփաւտայէն (4րդ հանգրուան): Ան 19 մրցումէ ի վեր անպարտելի է:

Նկատի ունենալով, որ թիւ 1 դասուած աստրալիացի Էթթըն Հուիթ ղուրս մնացած է մրցաշարքէն, շատերու համաձայն տիտղոսին գլխաւոր թեկնածուն այժմ կը նկատուի Ակասի:

Նշենք, թէ անցեալ տարի այս մրցաշարքէն բացակայած Ակասի (վիրաւոր ըլլալով), հինգերորդ անգամ ըլլալով իր եօթ մասնակցութեան ընթացքին կը հասնի աւարտականին:

Անոր արձանագրած այս յաղթանակէն ետք, նախկին թիւ 1 դասուած Շթեֆի Կրաֆ յայտնեց, որ եթէ իր ամուսինը տիրանայ այս մրցաշարքին, Ֆրանսայի թենիսի բաց մրցաշարքին (Ռոլան Կարոս) անոր հետ միասին խառն կոյզի մրցումներուն պիտի մասնակցի: Ակասի կը յայտնէ ըսելով, որ անոնց երկուքին միջեւ դրուած գրաւը այդպէս կը պահանջէ:

Կիսաւարտականին, Ակասի պիտի ձգար Ուելյն Ֆերէյրայի հետ (Հարաւային

րած Ֆերէյրա, 50րդ անգամ ըլլալով կր մասնակցի կրան-շրէմի մրցաշարքին մը: Նշենք, թէ նախքան իր այս յաղթանակը արձանագրելը, Ֆերէյրա իր կատարած նախորդ երեք հանդիպումներուն պարտուած էր Ֆերէրոյէն: Աղջկանց քառորդ աւարտականին ի մրցումները ընթացան սովորական, առանց անակնկալի: 2րդ դասուած ամերիկացի Վինըս Ուիլիըմս 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնեց 7րդ դասուած Տանիէլա Վանթրոյշովան (Սլովաքիա), իսկ 5րդ



Վինըս Ուիլիըմս

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:

ՔԱՌՈՂԳ ԱՄՍՏՐԱԿԱՆ (Աղջիկներ)

- 1.- Սերենա Ուիլիըմս (Ֆ. Ն.) - 25.- Սեկհան Շոկնետի (Մ. Ն.)
- 4.- Էմմա Էլիսթըրը (Պելճիաց) - 8.- Անասթասիա Միսիքիան (Ռուսիա) ՏՂԱԸ
- 18.- Եուլիան Այնաուի (Մարոք) - 9.- Էնտի Ռոտիք (Մ. Ն.)
- 31.- Ռայմըր Շիուլըր (Գերմանիա) - 10.- Դալիթ Նալպանտեան (Արժանթին)

Ստորեւ՝ երկուսն տղոց կոյզի եւ աղջկանց կոյզի քառորդ աւարտականի մրցումներուն արդիւնքները:

ՏՂԱՔ

- Ֆարիս Սաքոնո եւ Միքայէլ Լոտրա (Ֆրանսա) - Նիքոլա Լափենթի (Էքուատոր) եւ Թոտ Վուպրի (Աստրալիա) 6-4 եւ 6-4
- Ճէֆ Էոթթըր եւ Էրիկ Չակարտ (Հարաւային Ափրիկէ) - Տոնալտ Շոնսըն եւ Ճէրըտ Փալմըր (Մ. Ն.) 6-7, 6-2 եւ 7-6
- ԱՂՋԻԿՆԵՐ
- Սերենա Ուիլիըմս եւ Վինըս Ուիլիըմս (Մ. Ն.) - Էմմա Էլիսթըրը (Պելճիաց) եւ Այի Սուկիամա (Ճապոն) 6-4 եւ 7-5
- Լինտայ Տէվընփորթ եւ Լիզա Ռէյմընտ (Մ. Ն.) - Մարի Փիրս (Ֆրանսա) եւ Ռեմայ Սթապ (Աստրալիա) 6-1 եւ 7-5
- Էմանուէլ Զալիարտի (Չիլիացի) եւ Փեթր Մանուէլ (Հուսթոն) - Տադէյա Լաքոնիշուկ (Սլովաքիա) եւ Սեկհան Շոկնետի (Մ. Ն.) 6-4 եւ 6-2

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Մ. - ԻՍԼԱՀ ՊԵՐԺ ՇԻՄԱԼԻ 4-4

Լիբանանի ֆուտպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 5րդ հանգրուանէն յետագում մրցումը մը, երկ Հ. Մ. Մ. 4-4 արդիւնքով (կիսախաղ՝ 2-2) հաւասարութիւն մը արձանագրեց Իսլահ Պըրժ Շիմալիի հետ: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք 2րդ դիրքը գրաւող Հ. Մ. Մ., այժմ վեց կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Հ. Մ. Բ. Մ. Բ., որ ունի 26 կէտ: 3րդ դիրքը գրաւող Իսլահ, այժմ ունի 17 կէտ:

ԱԶՐՊԵՅՃԱՆ ՏԱԿԱԿԻՆ ԿԸ ՄՆԱՅ ՊԱՏԺՈՒԱԾ

Եու. Է. Էֆ. Ան երկ անգամ մը եւս հաստատեց, որ Ակրայէանի դէմ իր սահմանած պատժը կը պահէ ի պօրտ եւ անոր ակումբները չեն կրնար մասնակցիլ ֆուտպոլի միջազգային մրցումներու:

Նկատի ունենալով, որ Ակրայէանի կարգ մը ակումբներ հարցը ունին երկրի ֆուտպոլի ֆետերատիոնին հետ, Եու. Է. Էֆ. Ան պատմած է Ակրայէանը:

Որոշումը ակնյայտ դարձաւ շաքարավերջին, երբ Մոսկուայի մէջ տեղի ունեցող ԱՊՀի անդամ եւ Պալեստինայի երկիրներու ախոյեան խումբերու մրցաշարքին, չկար պարայէանական ակումբ: Մրցաշարքին կը մասնակցէր Ակրայէանի երիտասարդներու հաւաքականը:

ՍԱՐՔՈՋԻ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Ֆրանսայի ներքին գործոց նախարար Նիքոլա Սարքոյի երկ վզուցացուց երկրի ֆուտպոլի պատասխանատուները, որպէսզի հարկ եղած ամէն միջոցառումներուն դիմեն, կանխելու համար որեւէ միջադէպ, որ կրնայ տեղի ունենալ այս Շաքար Օր Փարիզի մէջ տեղի ունենալիք Փարիզ Մէն Ֆեռմէն - Մարսել մրցումին (Ֆրանսայի ֆուտպոլի բաժակ):

«Այժմէն իսկ երկու ակումբներուն նախահանդէսներուն կու գանք նշելու, որ խուլիկանութեան որեւէ արարք արձանագրուելու պարագային պիտի ըլլանք շատ խիստ», յայտարարեց նախարար Սարքոյի, աւելցնելով, որ շուրջ երկու հազար ոստիկաններ պիտի ըլլան պատրաստ վիճակի մէջ:

Երկու ակումբներուն միջեւ տեղի ունեցած մրցումները միշտ ալ կոհիւղ կ'աւարտին եւ կը ձեւակաւորուին բազմաթիւ անձեր. կ'ըլլան նաեւ բազմաթիւ վիրատուներ ալ:

«Փարք Տը Փրէս»-ի մէջ տեղի ունենալիք Ֆրանսայի ֆուտպոլի բաժակի մրցաշարքին Դ. հանգրուանի այս մրցումէն, մայրաքաղաքի կազմէն պիտի բացակայի պարպիլիցի Ռոնալտինիո: Նկատի ունենալով, որ անցեալ Դեկտեմբերին ի վեր ան իբրեւ հիմնական մարտիկ դաշտ չէ ներկայացած, մարտի Լուիս Ֆերնանտէս որոշած է Ռոնալտինիոն նկատի ունենալ իբրեւ պահեստի մարտիկ:

Փարիզ Մէն Ֆեռմէն, որ այսօր հիւրը պիտի ըլլայ Նիսի (Ֆրանսայի ախոյեանութիւն), պիտի փորձէ անպայման յաղթանակ մը տանալ անոր դաշտէն: Նշենք, թէ երեք հարիւր ոստիկաններ պարտականութեան վրայ պիտի ըլլան:

ԼՈՒՐՇԻՐ՝ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԷՆ

● Լիվերֆուլի մարտի Ժեռար Հուլիէ, երկ մերժեց Կալաթասարայի կողմէ իրեն ներկայացած առաջարկը, ըստ որուն, թրքական կազմը կ'ուզէր փոխ առնել անգլիական խումբին մաս կազմող փորթուգալցի յետասպահ Ապել Չալիէն:

«Մենք փոխ տալու մարտիկ չունինք: Եթէ Կալաթասարայ կ'ուզէ իր կազմին միացնել Չալիէն, կրնայ անոր համար մէկ միլիոն անգլիական փառնուս վճարելով «գնել» փորթուգալցին», կ'ըսէ Հուլիէ:

● ՊՈՐՏՈ իսկ համաձայն գտնուեցաւ իր ակումբին մաս կազմող Տաիտ Սոմէր պատարական, ըսելով, որ ան եթէ ուզէ կրնայ միանալ Մանչեսթըր Սիթիի: 28 տարեկան Ամէն բժշկական քննութիւններու ենթարկուելէ ետք կրնայ միանալ անգլիական ակումբին:

Սոմէրի Ֆրանսայի հեռացումը գլխաւոր պատճառը կը կարծուի ըլլալ այն իրողութիւնը, որ ազգային խումբի մարտիկ Շաք Սանթինի կողմէ նկատի չառնուելը յատկապէս դժգոհ ձգած է կեդրոնի յետասպահը:

● ՍՓՈՐՏԻՆԿ ԼԻՉՊՈՆԻ պատասխանատուներ երկ ֓արիկ Մէն Ֆեռմէնի յայտնեցին, որ եթէ կ'ուզեն փոխ առնել իրենց պարպիլցի յետասպահ Մարիո Շարուէլը, այդ մէկին մէջ արգելք չունին: Սակայն համաձայն չեն այն գաղափարին, ըստ որուն, ֆրանսական կազմը անոր միացումին համար մարտիկներու փոխանակում կ'ուզէ կատարել, երբ հակառակ ուղղութեամբ պիտի մեկնին մարտիկ յետասպահ Քարթուրի եւ պարպիլցի յետասպահ Ալոյզի Քարթուրի պատճառով կ'եղարկուին ըսելով, որ հետաքրքրուած է միայն կանխիկ դրամով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կոչ՝ Լիբանանի, Սուրիոյ եւ Յորդանանի հայուներուն:

Սիրելի՛ հայրենակիցներ, հնչալե ծածօք է մեր բոլորին, վերջերս Հայաստանի ամբողջ տարածքին տեղացող ձիւնը եւ դեռ շարունակելի առաւել տեղացող առատ անձրեւներն ու որոշ չափով կարկուտները միջազգային մասեր պատճառեցին, ի մասնաւորի գիւղացիներուն եւ գիւղաքաղաքներուն, որոնք արդէն որոշ դժուարութիւններու առջեւ կը գտնուին: Այս մտահոգութենէ մեկնելով՝ իբրեւ մեր հարազատ ընտանիքի անդամները համարելով, մենք զմեզ հայրենասիրական եւ ընտանեկան պարտաւորութեան տակ զգալով, կոչ կ'ընենք բոլոր հայրենակիցներուն, որոնք կը փափաքին աջակցութիւն բերել իրենց միջազգային կարողութեան ու կարելիութեան սահմաններու մէջ օգտակար դառնալու այս նպատակին, անհամբ եւ կամ իրենց կողմէ ներկայացուցիչ մը միջոցաւ, ուղարկելու եւ գիւղերու մէջ իրենց ձեռքերով յամրելու կարիքաւորներու, գիւղի գիւղապետին, եւ կամ պետական անձնակազմին մը ներկայութեամբ, ցուրտներ, ըլլան անոնք մեր կոշիկներ, բուրդե ներքին եւ արտաքին հագուստները, սննդեղէններ եւ դրամ: Որպէսզի այս ծրագիրը յաջողի եւ իր նպատակին ծառայէ, կազմակերպած ենք յատուկ գոյջ շրջապատայտներ մէկ շաբաթուան կենդանութեամբ մին՝ Հայկէտէ, 4 Մայիս 2003, միւսը՝ Պէյրութէն, 1 Մայիսին: Կեցութեան, Երեւանի «Երեւան» Ա. կարգի հիւրանոց, Նախաձայն եւ ընթրիք, օդանավ երթ ու դարձի տոմսակը, համապատասխան հաւաքուելիքը ցուրտներ նախատեսուած այցելելիք գիւղեր եւ քաղաքներ, 6 օրերու ընթացքին, Նոր Եղեւնի, Արթիկ գիւղ, Աշտարակ, Ապարան, Կիւմրի, Ճաղկաձոր, Գառնի, Գեղար, Սեւան, Արտաշատ, իսկ իբրեւ պտոյտ, պիտի այցելենք մաւր Ս. Էջմիածնի Մայր տաճար, Ս. Շիրակի մէ եւ Ս. Գայիանէ եկեղեցիները, Սարգսրապատ, Մուսա Լեռ, Եռաբլուր՝ ծաղկեպսակի գետեղում, Մատենադարան, եւ այլ վայրեր:

Ա. ԾԱՆՈԹ. Տեղեակ է Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանութիւնը այս ծրագիրը:

Արձանագրութեան համար Պէյրութ կազմակերպիչ ASHJIAN TOURS հեռ. 01/261177, 01/240654 եւ 03/233978, գիշերները՝ 01/258887 Ք. Օ. Box 80218, e-mail: ashjian@hotmail.com: Իսկ Հայկէտէ ARABIAN TOURISM «Պարոն» պողոտայ, հեռաձայն՝ 2115016: Յորդանանցիները կրնան մասնակցիլ Հայկէտէ կամ Պէյրութէն:

Պէյրութէն փոխան 650 տոլարի միայն 380 տոլար, Հայկէտէ փոխան 580 տոլարի միայն 360 տոլար:

Կազմակերպիչ՝ ASHJIAN TOURS

Բ. ԾԱՆՈԹ. Այն նուիրաւորները, որոնք կը փափաքին շատ շքեղ հիւրանոցներ իջեւանիլ, պատրաստ ենք շատ յարմար գիւղերով դասաւորել՝ որոշ գումարի մը տարբերութեամբ:

ԾԱՆՈԹ. Հայկէտէ եւ Պէյրութի խումբերը պիտի միանան իրարու:

ԱԶՏԱՌԻԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՅ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԷՉ

ՉԵՉԵՆՆԵՐ ԱՇԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՊԵՏՔ ՉՈՒՆԻՆ

Կ'ԸՍԵ ՄԱՍԽԱՏՈՎ

Չեչեն անջատողականներ «պետք չունին ահաբեկչության դիմելու» Ռուսիային ապատուրելու մեղք ձգելու իրենց պայքարին մէջ...

Ան ըսած է, որ ռուս ղեկավարները կը փորձեն ամէն գնով չեչեն ժողովուրդին «սրբապան պայքարը» ի խնդիր իրենց ապատուրեան»...

«Ամէն մարդ գիտէ, որ չեչենները այս պայքարը սկսած են 300 տարի առաջ: Այդ օրերուն Պրն Լատենը չկար», ըսած է ան:

Մասիատով արեւմուտքի ղեկավարները ամբաստանած է աչք փակելու յանցանքով Չեչենին դիմագրաւած հարցերուն դէմ՝ շեշտելով, որ իրենք «որեւէ գին պիտի չվճարեն, եթէ պարտադրեն Ռուսիոյ, որ դադարի չեչեն ժողովուրդին դէմ պայքարելէ»:

«Սակայն արեւմտեան երկիրները Ռուսիոյ խաղը կը խաղան ռազմավարական եւ շրջանային իրենց սեփական հարցերուն համաձայն: Չեչենիան, անոր ժողովուրդը եւ անոր պատերազմը սակարկութեան միջոց կ'օգտագործուին», ըսած է ան:

ՌՈՒՄԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԵՍ ԱՄԲԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Միւս կողմէ, մարդկային իրաւանց պաշտպան ռուսական խմբակներ երէկ դատապար-

ՍԵՆՏՏԱԿԱՆ ԱՐԱՐԻԱ

ՔԱՐԻՒՂԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ՔԱՐԻՒՂԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

ՓԱՐԻԶ, 21 (ԱՅՓ).- Քարիւղի եւ կապի հանքեր պեղող արեւմտեան ընկերութիւններ ճնշում կը բանեցնեն Սէուտական Արաբիոյ իշխանութիւններուն վրայ՝ փոխարինելու համար քարիւղի նախարար Ալի Նուայմին, որ կը նկատուի գլխաւոր խոչընդոտը արաբական երկրին մէջ կապի հանքերու մէջ օտար ներդրումներուն դիմաց:

Յունիս 2001ին, Սէուտական Արաբիա հրապարակի վրայ դրած էր կապի հանքերու պեղումի հսկայ ծրագիր մը, որ 25 միլիար տոլար կ'արժէ: Օտար որեւէ ընկերութիւն, որ ներդրում պիտի կատարէ, պիտի դառնայ գործակիցը սէուտական «Արաբքո» ընկերութեան: Նուայմի սակայն կ'առաջարկէ՝ դիտել տալով, որ Սէուտական Արաբիա եւ անոր տեղական ընկերութիւնները անհրաժեշտ փորձառութիւնը եւ մասնագիտութիւնը ունին առանձին ստանձնելու գործը: Ան սէուտական ապագային շահերուն դէմ կը նկատէ օտար ընկերութիւններու վերադարձը քարիւղի եւ կապի հանքերու պեղումներուն: Քարիւղի ամերիկեան ընկերութիւններ աւելի քան մէկ տարիէ ի վեր կը քննադատեն Նուայմին, որ կը յամառի իր կեցուածքին վրայ՝ մերժելով օտար ընկերութիւններու ներդրումը: Անոնք համոզուած են, որ սէուտական իշխանութիւններու հետ կարելի պիտի ըլլայ համաձայնութիւն մը գոյացնել, եթէ Նուայմի փոխարինուի:

տած են ինկուրեթիոյ մէջ «չեչեն գաղթականներու դէմ տեղի ունեցող պատերազմը» շարք մը գործողութիւններէ ետք, որոնք, ըստ այդ խմբակներուն, կը նպատակադրեն պարտադրել գաղթականներուն, որ հակառակ իրենց կամքին իրենց հայրենիքը վերադառնան:

Սվետլանա Կաննուչքինա մամլոյ առույիսի մը ընթացքին յայտնած է, որ ռուսական զինեալ ուժերուն կողմէ ինկուրեթիոյ մասին միջամտութիւնները «հետպիտէտ աւելի յաճախակի կը դառնան եւ գրեթէ նոյն տարողութեամբ են բաղդատած անոնց, որոնք Չեչենիոյ մէջ տեղի կ'ունենան»:

Շուրջ 17 հազար չեչեններ ներկայիս կ'ապրին գաղթականներու մէջ, ըստ պաշտօնական թիւերու:

Անցեալ տարի քանի մը հազար գաղթականներ համոզուած են, որ վերադառնան Չեչենիա: Ռուսական իշխանութիւններուն համաձայն, անոնց վերադարձը կամաւոր կերպով տեղի ունեցած է, սակայն մարդկային իրաւանց խմբակները յայտնած են, թէ ռուսական ուժերը ուժեղ ճնշում բանեցուցած են գաղթականներուն վրայ, որպէսզի հեռանան:

Ըստ Մոսկուայի, Չեչենիոյ մէջ կացութիւնը բնականոն դարձած է: Անկա Մարտին հանրաքուէ մը պիտի կայացնէ չեչեն նոր սահմանադրութեան մը մասին եւ անոր պիտի յաջորդեն նախագահական եւ երեսփոխանական ընտրութիւններ:

(ԱՅՓ)

ԻՐԱՆ

ՇԱՀՐՈՒՏԻ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԵ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

ԹԵՀՐԱՆ, 21 (ԱՅՓ).- Իրանի դատական իշխանութիւններու պատասխանատու Այաթոլլա Մահմուտ Հաշեմի Շահրուտի Երեքշաբթի օր քննադատած է ամերիկեան տեսանկյանը, որոնք հրահանգած են իրանեան ստեղծուած ունեցումները գործածել վարձատրելու համար Հըրպալլայի նախկին պատանդները:

Ան կոչ ուղղած է ամերիկացի դատաւորներու, որ փաստեն, թէ անկախ են նախագահ Ճորձ Պուշէն՝ որոշումը «վարկաբեկում մը նկատելով անկախ դատաւորներու»:

Վերջերս ամերիկեան տեսանկյանը որոշած են ամերիկեան կառավարութեան կողմէ գրուած ունեցումներէն հարիւր միլիոնաւոր տոլարներ յատկացնել ամերիկացի նախկին պատանդներու:

Ուաշինկթըն ամերիկեան դրամատնային հաշիւներու մէջ պահուած իրանի ունեցումները ստեղծուած էր 1980ին անոնց միջեւ յարաբերութեանց խլուկէն եւ ամերիկեան դեսպանատան պատանդներու տագնապէն ետք:

Իբրեւ հակադարձութիւն, իրանեան դատական իշխանութիւնները ստեղծած են յատուկ տեսանկյան մը, որ պէտք է զբաղի ամերիկեան կառավարութեան դէմ իրանցիներու գանգատներով, յատկապէս անոնք, որոնք վիրաւորուած են քիմիական պէնթերով՝ 1980էն 88 իրան-իրաք պատերազմին:

ՍԱՏՏԱՄ ԸԻԻՍԷՅՆ ԱՇԽԱՐԸԻ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

թէն Իրաք բաց պահած է բոլոր վայրերուն դռները, բայց Եւրոպայի անկախ մնացած հարցեր կան, որոնք մասին Պաղտատ տակաւին անհրաժեշտ բացատրութիւնը չէ տուած:

Ապահովութեան Խորհուրդի մնացորդ անդամ Ռուսիա, Ֆրանսա եւ Չինաստան հարցականի տակ կ'առնեն Պաղտատի դէմ պիտուողական գործողութիւն մը, որուն իրականացման համար արդարացուցիչ պատճառներ կը փորձեն գտնել Միացեալ Նահանգներ եւ դաշնակից Բրիտանիա: Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիսթի տը Կլիֆին ըսաւ, որ որեւէ բան չի կրնար արդարացնել քննութիւններուն ընդհատումը ու պատերազմի յայտարարութիւնը: Տը Կլիֆին աւելցուց, որ քննիչներուն ու անոնց կատարած աշխատանքին շնորհիւ ամբողջ աշխարհը տեղեակ է, թէ Իրաքի հաւաքական քանոնի պէնթերոն ծրագրիւններ կամ ամբողջութեամբ փճացած են, կամ՝ ստեղծուած:

Չինաստան իր կարգին ըսաւ, որ յաւելեալ առիթ ու ժամանակ պէտք է տալ քննիչներուն: Արտաքին գործոց նախարար Թանկ ժիակչուան ըսաւ, որ Յունուար 27ին ներկայացուելիք տեղեկագիրը գործընթացին անարդար պէտք է նկատուի, այլ՝ սկիզբը նոր հանգրուանի մը, որ պիտի շարունակուի աշխատանքը:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով իր կարգին պնդեց, որ տակաւին առիթ ու կարելիութիւն կայ խաղաղ լուծում մը ապահովելու տագնապին: Իվանով աւելցուց, որ ուժի գործածութեան պիտի դիմուի երբ քաղաքական լուծումի մը բոլոր լոյսերը սպառած են: Իվանով դիտել տուաւ նաեւ, որ Ապահովութեան Խորհուրդին մեծամասնութիւնը համոզուած է, որ կարելի չէ հրաժարիլ զինուորական ճիգերէն եւ թէ գրեթէ բոլոր երկիրները համաձայն են, որ քննիչները պէտք է շարունակեն իրենց աշխատանքները:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնի Մարտին ըսաւ, որ Սատամ Հիւսէյն աշխարհի ամէնէն վտանգաւոր բռնատէրն է, եւ թէ բացի պիտուողական գոր-

ծողութեան մը ընտրանքէն, բոլոր այլ ընտրանքները ճախողած են: Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը իր կարգին ըսաւ, որ պէտք չէ հաւատալ ու վստահիլ ՄԱԿի որոշումները գործադրելու եւ քննիչներուն հետ գործակցելու Իրաքի խոստումներուն:

Չինուորական գործողութեան մը դէմ համաշխարհային ընդդիմութիւնը եւ բողոքի ցոյցերը կը խրախուսեն Իրաքի իշխանութիւնները: Իրաքեան պաշտօնական մամուլը ողջունեց աշխարհի տարածքին տեղի ունեցող բողոքի ցոյցերը՝ պանոնք զօրակցութիւն նկատելով Սատամ Հիւսէյնի իշխանութեան: Իրաքեան օրաթերթերը լայն տեղ տրամադրեցին յատկապէս ամերիկեան քաղաքներու մէջ տեղի ունեցած ցոյցերուն:

Միւս կողմէ, փոխ նախագահ Թահա Եասին Ռամատան քննադատեց արաբական աշխարհը, որ կը բաւարարուի պատերազմի մը դէմ յայտարարութիւններ կատարելով: Ռամատան ըսաւ, որ եթէ արաբական աշխարհը կամենայ կրնայ արգիլել Իրաքի դէմ պատերազմը:

Օոցի Գործակցութեան Խորհուրդի ընդհանուր քարտուղար Ապտէլրահման Աբիա կոչ ուղղեց Ռուսիոյ թափ տալու զինուորական ճիգերուն,

(ԱՅՓ)

ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

կարգումներ, Արաֆատի հեռացումը, ծայրայեղական շարժումներու սանձումը, իսրայէլացիներուն դէմ յարձակումներու դադարեցումը եւ այլ պահանջներ:

Իսրայէլի ընտրութիւններէն մէկ շաբաթ առաջ, բոլոր հարցախոյզները կը նախատեսեն Շարունի վերընտրութիւնը: Յստակ չէ սակայն, թէ Շարուն ինչպիսի կառավարական ընկերակցութիւն մը պիտի կազմէ, երբ Աշխատաւորական Կուսակցութեան ղեկավար Ամրամ Միցնը կը յայտարարէ, թէ որեւէ պարագայի տակ պիտի չզգաշնակցի Լիբուտի ղեկավարին հետ:

Միւս կողմէ, Արաֆատը ըսաւ նաեւ, որ տակաւին կ'ուզէ կայացնել պաղեստինեան ընտրութիւնները, գործ պարտադրուած ջնջեց, իսրայէլեան ուժերուն ներկայութեան պատճառով: Պաղեստինեան ընտրութիւնները մաս կը կազմեն Իսրայէլի ու իսրայէլական քառեկիկ կողմէ պահանջուած բարեկարգումներուն: Պաղեստինեան նախագահական ու խորհրդարանական ընտրութիւնները նախատեսուած էին Երկուշաբթի օրուան համար, սակայն ընտրական կեդրոնական մարմինը գանոնք ջնջեց, յայտարարելով, որ կարելի չէ ընտրութիւններ կայացնել իսրայէլեան ուժերուն հրահանգներուն ու թնդանթիւններուն ներկայութեան:

Արաֆատ, որ հարցազրոյց մը կ'ունենար «Սի. Էն. Էն»-ի հետ, մտափախուցիլ յայտնեց, որ Իսրայէլ իրաքի դէմ պատերազմ մը պիտի օգտագործէ զինք պաղեստինեան շրջաններէն արտաքսելու համար:

ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ուժերը երէկ պաղեստինեան 28 վաճառատուներ քանդեցին Թուլքարմի մօտ՝ Նազլէթ իսա գիւղին մէջ: Ըստ բանակին տուած բացատրութեան, պաղեստինցիները արտօնազիր չունէին: Իսկ Ռամալլայի մօտ, իսրայէլեան ուժեր ձեռքարկեցին Համասի պատասխանատուներէն մէկուն կինը եւ պաղեստինցի ուժ ռուսիկներէ:

(ԱՅՓ)

ASHJIAN TOURS
Ս. Սարգսիս, Տեառնընդառաջի, Սենթ Վալընթայնի եւ Ատիա տօներու առիթներով, երազային շրջապատոյց ղեպի Կիպրոսի Լիմասոյ քաղաքը, 12էն 16 Փետրուար, 5 օր. օր մը Սիկոսիա, օր մը Լառնաքա, օր մը Այաճափա, օր մը Զաֆոս քաղաքները պտոյտներով, գիներ՝ Pefkos 3 աստղանի պանդոկ փոխան 380 \$ միայն 260 \$, Apollonia 5 աստղանի պանդոկ փոխան 485 \$ միայն 350 \$:
Հեռ. 01-240654 եւ 03-233978:

CITIZEN
Eco-Drive
AGENT EXCLUSIF ET DISTRIBUTEUR: H.G. YESSAYAN & CO. - TEL. 01 240960-1 P.O.BOX: 80555 BEIRUT LEBANON - E.MAIL: yes@dm.net.lb

galerie PIERROT
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans
Cadeau Special Noël pour chaque achat
Liste de Naissance et de Bâpteme
Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

AREV
BOUTIQUE
JAL EL DIB-CENTER OSCAR
TEL.: (04)715 170 FAX: (04)71 3397
BOURJ HAMOUD-CENTER ARINE
TEL.: (01)254953-4
AREV@hotmail.com